

ւորս անձանց ցուցակում սպրդել էին սխալներ և այն պարզ պատճառով, որ յայտնի ինտրիգան խմբակը աղքատ լինելով մարդկանցով, չունենալով երկու տասնեակ իսկ փոքր ի շատէ յարգելի մարդիկ, հասարակութեան գոնէ շատ համեստ կերպով յայտնի ցուցակում ժողովել էին, ի մի համախմբել և այնպիսի մարդոց, որոնց վստահութիւնը, հաւատը կասկածելի էր: Մամուլը մերկացրեց, որ վերջին բոպէին այդ անվստահելի մարդոց փոխել են տուել հեռագրով և փոխարէնը յանձնարարել նորերին:

Յայտնի է, որ Էջմիածնի համազգային ժողովի պատգամաւորների լիազօրութիւնը պէտք է քննէր ոչ թէ Սինոդը, այլ ինքը պատգամաւորական ժողովը:

Ընդունուած տարրական կանոն է, որ ամեն անգամ, երբ ներկայացուցչական մի մարմին քննում է իր անդամների լիազօրութիւնը, նա ընտրում է մի յատուկ յանձնաժողով, որը մանրամասն տեղեկանալով իւրաքանչիւր անդամի ընտրական գործի հետ, որոշ կարծիք է կազմում և զեկուցում ընդհ. ժողովին, որը կազմուած է անվիճելիօրէն ճիշտ ընտրուած պատգամաւորների (ներկայ դէպքում բոլոր առաջնորդներից, պատգամաւոր հոգևորականներից, որոնց ընտրութիւնը կասկածի անգամ տեղիք չէր տալիս),—այդ ընդհանուր ժողովը քննում է Յանձնաժողովի զեկուցումը կամ ուղղակի առանց քննութեան հաստատում: Ներկայ ընտրութեանը մենք տեսանք թէ ինչպէս քննուեցին պատգամաւորների ընտրութիւնները,—ուղղակի *աճուրդով*, ինչպէս տեսում են:

Տաճկահայաստանը պոսում էր տաճկահայութեան պարսկական յայտնի Միհրդատ Հայկազնի զեկավարութեամբ թէ բոլորի ընտրութիւնը վաւերական է և ուրեմն վաւերական է:

Զարմանալի կը լինէր ուրիշ կերպ վարուել, որովհետև եթէ այդ պոսացուցների ընտրութեան քննութեան մէջ մտնէր ժողովը, այն ժամանակ տաճկահայերի կէսը, եթէ ոչ աւելին, պիտի Բաթումի ճանապարհը բռնէր, այնքան պարզ էր նրանց ընտրութեան ապօրինութիւնը:

Մի տարօրինակ բան էլ. հեռագրով նշանակուած և փոխուած էին պատգամաւորները, իսկ մի հեռագիր, լինի նա թէկուզ պատրիարքի, ինչ արժէք ունի, ինչ փաստաթուղթ կարող է ծառայել իր իրաւունքը գիտակցող պատգամաւորական ժողովին, որ կոչուած է ինքը ստուգելու իր կազմը, իր անդամների ընտրութեան օրինաւորութիւնը: Իսկ յայտնի է, որ օրինաւորութեան և ապօրինութեան քննութեան համար անհրաժեշտ է *ամբողջ* ընտրական գործը և պատրիարքը իրաւունք չունի այդ ինչըրում միջամտել, իսկ երբ բաւականաճում են օրինաւորութեան համար միայն պատրիարքի հեռագրով, այդ արդէն ցոյց է տալիս թէ պատրիարքը իւրացնում է իրան Համազգային ժողովին վերապահուած Ֆունկցիան, դերը,—մի իրաւունք, որ սչ միայն նա չունի, այլ և համազգային ժողովն էլ իրաւունք չունի որևէ այլ մարմնի

գիջել:

Սակայն այդտեղ չէ սկսուած և վերջանում ապօրինութիւնը և մեզ հարկաւոր են հարիւրաւոր յօդուածներ արձանագրելու տեղի ունեցած բոլոր տգեղութիւնները:

Մենք ախորժակ չունենք մեր յօդուածներում սպասել կատարուած բոլոր ապօրինութիւնները, կանցնենք մի վերջին ապօրինութեան ևս, այն է՝ Կ. Պօլսի Ազգային ժողովի՝ Համազգային ժողովի դէմ կատարած ոտնձգութեան, որ ճակատագրական նշանակութիւն ունեցաւ ներկայ ընտրութեան ժամանակ և լցրեց ապօրինութիւններով լի բաժակը:

S. S.

ՉՈՐՄՀԱՐԻԻՐԱՄԵԱԿ ԸՆՅ ՊՏԱԳՐՈՒԹԵԱՆ

1512—1912

Ս.

«Եւ եղև լոյս»:

Ահա առաջին բառերը, որոնք Կիւթէնպէրկ արտասանեց, երբ մամուլէն դուրս եկաւ առաջին տպագրուած թուղթը:

Այն օրէն մասնաւորներու սեպհականութիւնը, առանձնաչնորհեալ դասակարգի մը մենաչնորհը՝ գրականութիւնը ամենուկ կրլլար: Մարդկային դարաւոր փորձառութեան բոլոր արգասիքները, որոնք ձեռագիրներու մէջ ծածկուած կը մնային, ամեն կողմը կը տարածուէին:

Կիւթէնպէրկի գիւտը պատմութեան մէջ իբր պատճառ յեղափոխութեան մը, իր նմանը չէ ունեցած, թէև անիկա մէկ պահանջը եղած ըլլար մարդկային քաղաքակրթութեան՝ որ իր բնական ընթացքի մէջ, դարաւոր ջանքերով, անշուշտ պէտքէն մղուած պիտի ստեղծագործէր և կատարելագործէր գիրը, գաղափարներու փոխանակութեան յոյս միջոցը, հանրամատչելի դարձնելու գաղափարը, մեհնադրոյս արձանագրութիւններէն սկսեալ հասնելու համար արագտութիւն մամուլին և անոր վերջին կատարելութիւններուն:

Գրականութեան և ճարտարութեան յամընթաց զարգացումը արդէն ԺՆ դարուն սկիզբը անհրաժեշտ դարձուցած էին թուղթի գլխտէն յետոյ, մեքենան բազմազրութեան մը պէտքը, որ մինչև այն ժամանակ շատերուն մտազրազութեան առարկան եղած էր:

Տպագրութեան գաղափարը արդէն նոր բան մը չէր: Կիւթէնպէրկէն առաջ, ԺՆ դարուն սկիզբները տպագրութիւնը սկսուած էր, բարձրաքանդակ փորագրեալ տախտակներու միջոցաւ և մելանով, նման «Յապմա»-ներու վրայ տպագրուած կաղապարներուն: Այս ձևով տպագրուած են Գերմանիոյ, Նորմատայի և Վենետիկի մէջ Լատիներէն նախնական քերականութիւններ, ժողովրդական մանրավէպեր և կրօնական գրքոյկներ, Պապերու ներողութեան թղթերը, խաղի թուղթեր և այլն, որոնք

կրնան նկատուել հնագոյն յիշատակարանները տպագրութեան Զովհաննէս Կիւթէնպէրի (1397—1468) երկտր պրպտումներէ յետոյ, որոնց սկսած ըլլալ կերեայ 1436 էն սկսեալ, կը կատարելագործէր տպագրութիւնը շարժական տառերու գաղափարը յղանալով և զայն առաջին անգամ կիրառութեան գնելով իր ծննդավայրին, Մայնսի մէջ: Իր առաջին գործն էր Աստուածաշունչի մը տպագրութիւնը, որ 1456 օգոստոսին աւարտեցաւ: Հռեմոսի Զորէն, այս հրաշալի գիւտը գրեթէ անհաւատալի արագութեամբ մը տարածուեցաւ բոլոր Եւրոպա, մասնաւորապէս Իտալիա, ուր արտակարգ զարգացման հասաւ: Վասն զի տպագրութեան գիւտը կը զուգահէտէր Իտալական գրականութեան վերածնութեան արշալուսին և գեղարուեստներու հրաշալի փթթումին:

Կ. Պօլտոյ գրաւարձէն յետոյ բաղմաթիւ յոյն գիտնականներ Իտալիա ապաստանած էին, իրենց հետ տանելով ձեռագիրներ, որոնք ուսումնասիրութեան ուժգին եռանդով մը և ծնունդ տուին վերածնութեան շարժման: Տպագրութիւնը այս ուսումնասիրութեանց գլխաւոր օժանդակը կրնար ըլլար, ուստի ընդգրկուեցաւ Իտալիոյ առաջին տպարանը կը բացուի 1464 թուին Հռոմի մօտ Սուպիաբօյի Արքայարանին մէջ: Անոր կը յաջորդէ 1467-ին Հռոմի տպարանը: 1469-ին Վենետիկ, 1471-ին Նաբօլի, Ֆլորանս, Պօլսեիա, կուեննան իրենց տպարանները, որոնք կ'օժանդակեն Իտալական հոյակապ գրականութեան վերագործումին, որ բոլոր նոր ազգերու գրական վերակենդանութեան առաջնորդը պիտի ըլլար:

Մասնաւորապէս՝ Իտալական բաժան-բաժան պետութեանց մէջ, իբր տպագրական արուեստին գերազանցապէս ընդունակ իշխանութիւն, Վենետիկ կը ներկայացնէր առանձնայատուկ ու մասնաւոր տեղ մը, ժՅ. դարու կէսին՝ երբ տպագրութեան գիւտը կը կատարուէր Հոնոնոսի հովիտին մէջ, Վենետիկ իր բարգաւաճումի գաղաթնակէտին վրայ կը գտնուէր:

Անիկա Արեւելքի բոլոր վաճառականութիւնը իր ձեռքերուն մէջ ունէր, և հարկան երկիրներու և հեռաւոր գաղութներու մէջ կիշխէր մօտաւորապէս 3/2 միլիօն բնակչութեամբ երկիրներու:

Կառավարութեան հանրապետական ձևը, պետութեան վարիչներու աւելի քաղաքագէտ ու աւելի առևտրականի ուղղութիւնը, այդ մօլեռանդ դարուն մէջ իրեն կը ծառայէին բացառիկ գիրք մը:

Վենետիկ՝ դարերու նախապաշարումներուն հստակած տալով, 1453 թուին քրիստոնէութեան ահարկութեամբից եղող Իսլամին (թուրք պետութեան) հետ դաշինք կընէր, առաջին անգամ քաղաքակրթութիւնը և կրօնքը իրարմէ անջատելով:

Պերճանքի, շքեղութեան և արուեստներու հրաշալի զարգացման, որու հասած էր բոլոր միւս իտալական երկիրներու պէս, Վենետիկ ունէր երկու մեծ առաւելութիւններ:

I. Անիկա առաւ միջոցներ ունէր հաղորդակցու-

II. Համեմատաբար նուազագոյն չափով կը գտնուէր պապական անհերոգութեան ազդեցութեան տակ:

Հետևաբար այս հարուստ ու զարգացած միջավայրին մէջ, մամուլը բնական է թէ պիտի հասներ անօրինակ զարգացման մը:

1469-ին՝ Վենետիկի Ծերակոյտը տպագրութեան գործը մենաշնորհի չը վերածեց, սակայն հոսանքին առջև տեղի տալով ի վերջոյ միայն պետական հսկողութեամբ կը բաւականանայ: Որով տպարաններ իրարու կը յաջորդեն և նոյնիսկ սերունդէ սերունդ կը փոխանցուին: Տպագրիչ ընտանիքներու մէջ ամենէն երևելին կը հանդիսանայ Ալդոյ ընտանիքը, որուն պետք՝ Ալդոյ Մանուցիոյ «երէց» կոչուածը, արուեստին կատարելագործութեան մեծապէս կը նպաստէ: Միևնոյն ատեն անիկա իբր վերածնութեան դարուն հարագատ գաւակ ու արուեստի սիրովը լցուած արուեստագէտ, մեծ զարկ ու մղում կուտայ Յունական ուսումներու, Բիւզանդիոնի կործանումէն ազատուած ձեռագիրներէն հրատարակելով:

Այս գործին համար 30 գիտուններ կ'օգնէին իրեն անձնուիրաբար, ոգևորուած գործին վեհութեամբ: Իր մահէն յետոյ իր տպարանը շարունակած է որդին Պօլոս և թուր՝ «կրտսեր» Ալդոյ, և այսպէս շարունակաբար մինչև ժ. դարուն վերջերը գործած է:

Վենետիկի մէջ տպագրական գործը այնքան կը բեղմնաւորի, որ ժՅ. դարուն վերջը, հազիւ 25 տարի յետոյ այն թուականէն (1469), ուր առաջին տպարանը բացուած էր Վենետիկ, 200-ի մօտ տպարաններ կը գործէին:

Միայն այս թիւը կը բաւէ գաղափար տալու համար, թէ ինչ արագութեամբ կը մշակուէր տպագրութիւնը Վենետիկի մէջ: Երբ Վենետիկի մէջ 150 տպարաններ կը գործէին, պապական աթոռը Հռոմի՝ հազիւ ունէր 37 տպարան, Մէտիչներու ուսանը Ֆլորենցիա՝ 22, Բոլոնիա՝ 42 և Միլան, Փարիզ, Լիօն՝ երեքն միասին հազիւ 150 *):

Հազիւ 25 տարուան ժամանակամիջոցին մէջ Վենետիկ տպուած գիրքերուն թիւը կը հասնէր 2 միլիօն օրինակի **):

Վենետիկի մէջ տպագրուած բոլոր այս գրքերը լիկ Վենետիկցիներու համար չէին: Բոլոր այն ազգերը, որոնց հետ չիլում ունէր անիկա, օգտուած են այս շարժումէն, գրեթէ ամենքն ալ անկէ ստանալով իրենց առաջին տպագրեալ գրքերը:

Բոլոր Եւրոպայի և անոր գանազան ազգերուն իրենց ամեն մէկուն յատուկ լեզուովը գիրքերուն հայթհայթիչը ըլլալէ զտո, անիկա Արեւելեան ազգերու ալ մտքի սնունդը հայթհայթով կեդրոնը եղաւ:

*) Պատմութիւն Հայկական տպագրութեան, Վենետիկ, 1895 թ. էջ 13—14:

**) Հայկական տպագրութիւն, մեր կեանքը, գրականութիւնը անցեալում. Լէօ, Ա. հատ. Թիֆլիզ, 1901 թ. էջ 8:

Հոն գարգացաւ սլաւօնական տպագրութիւնը և երկար ժամանակ սլաւօնական աշխարհը այստեղէն կը ստանար իր գրքերն ու տպարանները: Այստեղ կար հրէական տպագրութիւն, այստեղ 1518 թ. տպագրուեցաւ Ղուրանը արաբական լեզուով: Աւելորդ է ըսել, թէ Յունարէնը արդէն ամենէն մեծ ծաւալ գտած էր այս լեզուներում:

Վենետիկ ուրեմն առաջնորդը կը հանդիսանար Արևելքի խաւար միջավայրին ու իսլամական կեղեքումներու տակ ճնշուած ժողովուրդներուն և գանոնք հազորդակից ու մասնակին կընէր յեղաշրջող մեծ գիւտին:

Ասոնց մէջ առևարական շահախնդրական տեսակէան ալ անշուշտ տեղ ունէր և քաղաքական-սիրաշահութեան դիտումներն ալ դեր մը կը կատարէին:

Համաշխարհային այս հանդէսին մէջ հայք ալ իրենց բաժինը ունեցան և 1512-ին առաջին անգամ Հայ տառերը տպագրական մամուլէն անցան:

(«Կոչնակ»)

Արշակ Ա. Ալլոյաճեան

ՄԵՐ ԿԵԱՆՔԸ 1911 ԹՈՒԻՆ

VI

Ռուսահայ կեանք

Նկեղեցի եւ Կաթողիկոսական հարց

2. ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿՈՆ ՀԱՐՑ.

Տաճկահայերից փաստ. Չերազ դէմ է լինում Օրմանեանի թեկնածութեան այն նկատումով, որ ամբոխի այսլանմանն է ենթարկուած և լաւ չէ, որ հայոց հայրապետը այդպիսի վիճակ ունեցող մէկը լինի, մոռանալով, որ ամբոխը անգէտ է և չի կարող մարդու վարկաբեկել երբէք. ամբոխը միայն իրեն կը վնասէ և այդպէս էլ է լինում. շատ թոյլ առարկութիւն: Ա. Չոպանեանը պաշտպանում է Կարապետ եպ. ի թեկնածութիւնը, «բայց ուրախ կըլլար, որ Օրմանեանը ընտրուէ»: Ազգային Ժողովի դէմ բողոքում են և եգիպտահայերը, որ Օրմանեանի դատը չեն տեսնում և այսքան ձգձգում են:

Այսպիսով տեսնում ենք, որ Օրմանեանի շուրջը կատարում է ահադին պայքար. մի կողմից զրպարտութիւններ են տեղի ունենում, միւս կողմից այդ զրպարտութիւնները հերքում են, ուստի և ռուսահայերի մեծ մասը անցնում է Օրմանեանի կողմը:

Օրմանեանից յետոյ հրապարակում քննութեան ու պայքարի առարկայ է դառնում Ատրպատականի առաջնորդ Կարապետ եպ.-ը: Արդէն Իզմիրլեանի մահից յետոյ, զգալով որ այս պատրաստի, երթտասարդ ու եռանդուն հոգևորականը կարող է կաթողիկոսական թեկնածու լինել, վայնասուն են բարձրացնում, թէ Իզմիրլեանի մահուան պատճառն է եղել. մի յերիւրանք, որ «Բիւ-

սրբազան ու պաշտելի անունների շահագործումով, վե՛հ գաղափարների անունով: Ոգևորող ու հոգին ազնուացնող ո՛չ մի գաղափար չի քարոզում այլևս, այլ դրա փոխարէն աւաւօտից մինչև կրեկոյ մենք ականատես ենք լինում կեղոտտ լուացքներ լուանալու արարողութեան: Լրագրութիւնը դարձել է արհեստ, շաւլաթանութիւն, բայց ո՛չ կոչում: Իշխում է փողոցը, մեռած են ճշմարտութեան գաղափարը, հասարակութեան լուազոյն շահերն ծառայելու ձգտումն ու կոչումը...

Միթէ դա լրագրութիւն է, միթէ «Հորիզոնն» ու «Ժամանակը» կարող են ճշմարտութեան ու վե՛հ գաղափարների ուսուցման ամբիոն լինել ու համարուել...

Վերջը՛ք կաթողիկոսական ընտրութիւնները: Միթէ մեր դժբաղդ կեանքի այդ ամենայուզիչ և հանդիսաւոր ակտը արդէն կարիկատուրա չի դարձել: Միթէ վերջին երկու-երեք ընտրութիւնները չեն ասում ձեզ, որ նոյնիսկ ամենաբարձր ու նուիրական գաղափարները մենք ընդունակ ենք կօմեղիս դարձնելու, թքով խեղդելու: Միթէ չէ՛նց այն հանգամանքը, որ ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրութիւնն այժմ կախումն ունի ժողովրդի տակա՛նքը կաղժող Տէր-Անգրէասեաններից, Միհրդատ Հայկազներից, Պալաքեան վարդապետներից և Վր. Փափաղեաններից, որոնց ուրիշ աղգերի մէջ ոչ մի կարգին հասարակութիւն չի հանդուրժի իր մէջ, — միթէ, ասում եմ, չէ՛նց այդ հանգամանքը բաւական չէ համոզելու, որ վե՛հն ու բարձր փառքում են արդէն մեր կեանքից, մեր հասարակական գործերից:

Կարիկատուրաներ կան, որոնք ծիծաղեցնելու փոխարէն արիւն են քամում մարդու սրտից: Միթէ սրանից աւելի սոսկալի ու արիւն քամող կարիկատուրա կարող էք ցոյց տալ մեր կեանքում:

Վերջը՛ք մեր մէջ տօնուող յօքելճանները: Յօքելճան կատարել, — նշանակում է միջոց տալ հասարակութեանը, որ նա իր շնորհակալութեան և երախտագիտութեան անկեղծ խօսքը ստի իր վաստակաւոր մշակների նկատմամբ, համոզի նրանց, որ բազմաթիւ տարիների նրանց աշխատանքը անօգուտ չի կտրել, որ ինքը գիտէ զնահատել իր գործիչներին, գիտէ խրախուսել նրանց, պահպանել ու, եթէ կուզէք, կեանք տալ, ոգևորութիւն ներշնչել նրանց:

Բայց ինչ են դարձրել մեզանում յօքելճանները: Մուրացկանութեան մի-մի ցուցահանդէսներ, ուրիշ ոչինչ:

Ինչո՞ւ անուններ տամ և օրինակներ բերեմ: Ինչո՞ւ ցուցնեն մարդկանց: Ո՞ր հայը չգիտէ այդ: Ո՞վ մեզանից չի մասնակցել այդ վիրաւորական, խոցող, սպանող ցուցահանդէսներին:

Այժմ ուզում են տօնել հայ տպագրութեան չորս-հարիւրամեայ յօքելճանը: Ո՞վքեր, թե՛չպէս, երբ — կիմանանք երեւի չուտով: Բայց միթէ դա յօքելճան է, միթէ նա յիբաւի հայ ժողովրդի բուռն ցտեկութիւնն է, նրա պահանջն է, իմ սիրելի բարեկամ Վար. Ենգիբարեանն ասում է, որ շուտով մի կիսաաւարտած ծիծաղելի յօքել-

ճան կունենանք: Բայց ծիծաղելի խօսքը խիստ թոյլ ալատելու Դուսով մենք կունենանք մի խայտառակ կօմեղիս, հայի վրէժխնդրութեան, չկամութեան ու թշնամական ոգու մի անօրինակ արտայայտութիւն, որին դու բերուած կը լինի այն, ինչ որ ուզում են յայտարարել որպէս մեր կեանքի ամենաթանկագին ու հօր գործուներից մէկը, — հայ տպագրութիւնը և նրա յօքելճանը:

«Մշակի» յօքելճանը պէտք է խանգարել, անգամ խափանել, եթէ հնարաւոր է. — մասնեցին Լէօն և ընկ. Բ. Հն, միմիայն այդ նպատակով. առաջարկում օրից այլապէս ինչո՞ւ չէին աշխատում, մարդավար և յօքելճանին վայելուչ խոշոր պատրաստութիւններ տեսնուին նախօրօք և ամեն տեղ:

Եւ միթէ ուրիշ միջոց չկար վրիժառութեան:

«Մշակի» դէմ ես շարունակ կուռել ու պայքարել եմ բազմաթիւ տարիների ընթացքում և ներկայ դէպքում ես ամենին նպատակ չունեմ պաշտպանելու նրան: Բայց երբ հայ տպագրութեան 400-ամեակը ուղում են դէն, դարձնել անձնական մանր ու զժուժ հաշիւների համար երբ այդ սրբազան տօնը աշխատում են կեզտաւ վրէժխնդրութեան արտայայտութիւն դարձնել ու այդպիսով խայտառակ կօմեղիս ստեղծել համազգային մեծ տակ փոխարէն, — ես ամբողջ հոգովս ցնցում և յուզում եմ ու, գտնելով Լէօնի և ընկ., բացակայում:

— Պարոններ, անմաքուր ձեռքերով ու խղճով մի մօտենաք այդ սրբազան տօնին: Պարոններ, կարիկատուրա մի դարձրէք այդ մեծ գործը...

Է՛լ ինչ է մնացել մեր մէջ, որ կարիկատուրա չդառնայ:

Ասացէք, եթէ գիտէք:

Մոսկուտ, 17 փետր. Ս. Միրզաշիւր

ՉՈՐՄՀԱՐԻՒՐԱՄԵԱԿ ՀԱՅ ՊՏԱԿՐՈՒԹԵԱՆ

1512—1912

Բ.

Հայոց յարաբերութիւնները հնօրեայ են Վենետիկ հետ: Ռուբինեանց ժամանակէն սկսեալ Հայք առևտրական յարաբերութիւններ ունեցած էին Վենետիկի հասարակապետութեան հետ: Երբ տպագրութեան արհեստը կը հասնէր ծայրայիղ բարգաւաճումի մը այդ չքնաղ քաղաքին մէջ, հոն արդէն 1253-էն ի վեր գոյութիւն ունէր «Հայոց տունը», բաւական ճօխ հայկական գաղթականութիւն մը: Այդ հայերը քաղաքին մէջ այդքան ուշագրաւ զարգացման մը հասնող արհեստի մը անտարբեր չէին կրնար մնալ: Եթէ մնային իսկ, մրցումը այդքան

բազմաթիւ սպարաններու միջև, որոնք զանազան ազգաց վերաբերեալ սպագրութիւններ ընելով իրենց գոյութիւնը կը պահէին, պիտի մղէր անոնցմէ մէկը հետամտելու հայերէն լեզուով սպագրութիւններու:

Այս երկու կարծիքէն որն է ճիշտը, խնդրական կը մնայ, որչափ ատեն որ նոր լոյս մը չափռուի մութին մէջ մնացած բնականաբար Յակոբին անձին և D. I. Z. A. չորս տառերուն տակ ծածկուած սպարանին վրայ:

Վենետիկի հասարակագիտութեան մէջ օտարները արածուած չէին սպարան բանալու, որով այդ գիրքերը սպարանի մը մէջ սպուած էին:

Սակայն ինքն հայ էր. սիլ էր. ինչ մաս ունեցած է. ինչ գաղափարի ծառայած է, ո՞ր տեղացի է. ինչպէս Վենետիկ գտնուած է. ասոնք մութը կը մնան:

Միայն իր ձեռքովը սպագրուած հինգ գիրքերն— 1. Պարզութեամբ (1512), 2. Պատարագատեսար (խորհրդատեսար Ս. Պատարագի) (1513), 3. Աւրբաթագիրք-Կիւրիանոս (1513), 4. Տաղարան (1513), 5. Աղթարք (1513), ցոյց կուտան թէ այս հրատարակութեանց մէջ շահախնդրութիւնը կամ առևտրական ըմբռնումը աւելի շատ տեղի ունի, քան թէ գրական-մատենագրական ճաշակը, սակայն վերջապէս սկսուած շարժում մը կար, որ հազու մէկ տարուան կեանք ունենայէ յետոյ կը կատար յանկարծ:

Ասիկա առանց պատճառի չէր:

Վենետիկի քաղաքական պատմութիւնը կը լուսաբանէ հայ սպագրութեան պատմութեան այս մութ մնացած կէտը:

Վենետիկ՝ աննախընթաց ընդարձակութեան մը հասնելէ յետոյ, ԺՍ. դարուն երկրորդ կէտին մէջ, յարատև կերպով մաքառելով գրացի մէկէ աւելի պետութեանց հետ, ԺԶ. դարուն սկիզբը դէպի անկում սկսաւ դիմել:

1513-ին թրքաց հետ խաղաղութիւն կը կնքէր, գրեթէ սպառած վիճակի մէջ, 1540-ին արդէն Վենետիկ կորուսած էր գրեթէ Արևելքի բոլոր ստացուածքները: Գար մը յետոյ Վենետիկ արևելքէն բոլորովին վանուած էր:

Արդ՝ 1513 թուականին Վենետիկի արևելքի մէջ ունեցած ազգեցութիւնը, մահացու հարուած մը կընդունէր, և իբր արևելքի բնիկներ՝ հայոց յարաբերութիւնները կը դժուարանային Վենետիկի հետ, հետևաբար գիրքերու առաքումը և վաճառումը կը դժուարէր: Քաղաքական պատահար մը հայ սպագրութեան ընտան ընթացքը կը կասեցնէր: Ուրեմն հաւանական է կարծել թէ հայ սպագրութեան առաջին թելադիր պատճառն չա՛ն եղած է և ոչ թէ դադարաբեր, որ լծորդուելու համար արհեստին պէտք էր իրական պահանջ մը մղուէր, մինչ ԺԶ. դարը հայ գրականութեան ամենէն դժբաղդ մէկ շրջանը կը ներկայացնէր: Հայութիւնը բովանդակ մատնուած էր սրածութեանց և անօրինակ կեղեքումներու, և կեանքի մտահոգութիւնը ամենէն հրամայական պահանջ էր: Այս ահարկու միջավայրին մէջ բնական է թէ գրական արտագրութիւններ ոչ կընային յղացուիլ և ոչ ալ գիրքի առնուիլ, Հետևաբար՝ դադարաբեր մը տարածումը, նպա-

տակի մը սէրը, խանդավառող իդէալին հրատարակումը չէին կրնար սպագրութեանն օժտողակութիւն սպասել:

Տգիտութեան մէջ ընկղմած ժողովուրդ մը շատ շատ տաղարանով մը կրնար հրատարակել, կամ երազանով մը հմայուել, և կամ շատ շատ մտածել եկեղեցական գիրքերու վրայ: Եւ ասոնք եղած են իրականութեան մէջ հայ սպագրութեան առաջին ժամանակամիջոցներու բոլոր արտագրութիւնները, մինչև որ դրական վերածնութիւնը իր արձագանքը ունեցաւ հայոց մէջ:

Հայ սպագրութեան առաջին փորձէն մերձադրապէս կես դար յետոյ կը յաջորդէ քաղաքական շարժառիթներէ թիլագրուած սպագրութիւն մը:

Հայոց ազատագրութեան գաղափարը նոր չէ: Արևելքի բոլոր քրիստոնեայ ժողովուրդները՝ խաչակրաց ժամանակէն սկսեալ, արևմտեան քրիստոնեայ ժողովուրդներու վրայ յոյս դրած էին, խլամուսթեան բովանդակ արևելքի մէջ տիրապետող հանդիսանալէն յետոյ ալ այդ ակնկալութենէն չզարդեցան. Հայ կաթողիկոսները գրեթէ միշտ թղթակցութիւններ ունեցան Հռոմայ պապերու հետ, միշտ յուսալով թէ նոր խաչակրութիւններով Եւրոպա պիտի ջանար ազատել արևելքի քրիստոնեաները:

Ստեփաննոս կաթողիկոս (1542--1564) նոյնիսկ անձամբ դէպի Եւրոպա ճամբորդեց (1547): Նախ դիմեց Վենետիկ, արևելքի մէջ ամենէն ազդեցիկ պետութեան կեդրոնը, ուր ներկայացուց հայ զլխաւորներու մէկ խնդրագիրը: Անցաւ Հռոմ, ուր երկար առնէ մնաց պապին հետ բանակցելու համար: Ապա գնաց Կերմանիա և ներկայացաւ Կարլոս Ե. կայսեր Յետոյ Լեհաստանի և Մոսկուայի ճամբով դարձաւ Էջմիածին բոլորովին ձեռնուայն (1551):

Միքայէլ Սերաստացի († 1570), 1562-ին իր ծննդավայրին մէջ բազմաթիւ եպիսկոպոսներ ժողովի հրաւիրելով անոնց համախոհութեամբը Փոքր Հայոց Սենեքերիմ թագաւորի սերունդէն թօղաացի Արդար շղափրքէ իբր բանագնաց Հռոմ դրկեց, ընկերակցութեամբ իր Սուլդանշահ որդւոյն և Աղէբսանը քահանայի Ասոնց պաշտօնը պիտի ըլլար. Ա. յիշեցնել պապին իրենց խոստումը արևելքի քրիստոնեաներու ազատագրութեան համար, Բ. իմանալ թէ արևմտեան քրիստոնեայք ինչ կը խորհին հայոց մասին, Գ. պիտի ջանային համոզել հայերը փրկելու, Գ. միջնորդ ըլլալ Հռոմի պապին և հայոց Հայրապետին միջև տեսակցութիւն մը կարգադրելու *):

Կ. Պօլսոյ մէջ հայ սպագրութեան ծագման շարժառիթը մենք միայն մրցումով կրեանք մեկնել:

* Արդարի Հռոմ ուղևորութեան քաղաքական բնոյթ ունենալը մակերեսայնաբար կը հաստատուէր Չամչեանի (Հտ. Գ. էջ 520) և այլոց գրածներէն, սակայն մանրամասնութիւնները դեռ վերջերս լուսաբանուեցան Արգարին որդւոյն մէկ նամակէն, որ գտնուեցաւ Անտոնեան միաբանութեան գրադարանին մէջ:

Հայք արևելքի մէջ դէպի լուսաւորութիւն առնուած քայլերու մէջ միշտ առաջապահներէն մէկ եղած են:

Տպագրութեան գիւար չէր կրնար անտարբեր թողուլ զիրենք: Կ. Պօլիս թէև թրքական քաղաք մը, Եւրոպայի նախադուռն էր, և այնքան շատ յարաբերութիւն ունէր Եւրոպայի հետ, որ արդէն որոշ չափով մը կրնար զարգացած կեդրոն մը համարուի: Հոն գետեղուած էին թրքաց տիրապետութենէն յետոյ շինովական և Վենետիկեան գաղութներու բնակիչները: Հոն թէև հիմնովին վտանգուած* սակայն ոչ երբէք ջնջուած կը մնար Բիւզանդական արուեստը և անոր քաղաքակրթութեամբը անած ժողովուրդ մը:

Հետևաբար Կ. Պօլիս տպագրութեան արուեստին ընդունելութեան համար լաւ գետին մը կը ներկայացնէր:

Հոն տպագրական մամուլ գետեղելու պատիւը եթէ չենք սխալիր, կը պատկանի արևելքի ժողովուրդներուն ամենէն հնարիմացին ու ամենէն գործնականին՝ հրէային: ԺՆ. դարուն մէջ արդէն հրէայք գաղանի կեդրով կը տպագրէին գանազան զիրքեր: 1490-ին Կ. Պօլսոյ մէջ տպուած է Էւստուծայ ժողովուրդին պատմութիւնը: անուն հրէական զիրքը:

Յոյնք՝ երկրին բնիկները և համեմատաբար ամենէն զարգացածները, Կ. Պօլսոյ մէջ տպարան հաստատած պէտք է ըլլան ոչ շատ ուշ քան հրէաները, թէև Վենետիկի մէջ իրենց բոլոր ազգային հրաշակերտները կը տպագրուէին մեծ թուով և Կ. Պօլսոյ մէջ իրենց յատուկ տպարանի մը սկիզբը մնչի յայտնի չէ**):

Հայերը՝ 1567-ին կը յաջողին հայ տպարան մը հիմնել Կ. Պօլսոյ մէջ, Կործին կապուած մարդոց բազմութիւնը, պատրիարքի նովանաւորութիւնը և վարդապետի մը վերակացութիւնը ցոյց կուտան թէ գործը պարզ անհատական ձեռնարկ մը չէր, ինչպէս մինչև հիմա մեկնուած է: Ընդհակառակը որոշ կերևայ թէ ունէր ազգային հանգամանք: Հաւանական է, որ այս առաջին գիրքերն ալ գաղանի տպագրուած ըլլան, որովհետև տիրապետող տարրը կը գտնուէր կատարեալ ազիտութեան մէջ, և թշնամի էր ամեն քաղաքակրթական ձեռնարկի:

Այսօր գլխաւոր տպացոյցը սա է, որ թուրքերը հրէաներէն 240 և հայերէն 160 տարի յետոյ, 1726-ին հազիւ առաջին անգամ տպագրեալ զիրք մը կուեննային, այն ալ ամենամեծ դժուարութիւններով:

Գարձեալ բաղադատութեան ղեկով ուրիշ ազգերու հետ հայերը, պիտի տեսնանք թէ արդիւնքը մեզի նպաստաւոր է: Հայերը այս գիւտը արևելքի խորհրէն, Նոր-Ջուղայ կը տանէին 1639-ին, մինչ իրենց բնակակից և քաղաքական կեանքին մէջ աւելի նպաստաւորեալ ժողովուրդ մը վրացիք, 1709-ին միայն առաջին անգամ

Թիֆլիզի մէջ տպարան կուեննային: Հայուն նախաձեռնութիւնը սակայն միշտ չէ նպաստաւորուած դժբաղդաբար, իր եւանդուն նկարագրին յարմար գործելու ասպարէզ չգտնալով:

Կ. Պօլսոյ տպագրական առաջին ձեռնարկն ալ կարճ կեանք ունեցած է մասնաւորապէս ազիտութեան հետեւեցումով:

Սակայն Արզարի գործը չմոռնիր: Անիկա կը ծլի գարձեալ Եւրոպայի մէջ՝ ի Հռոմ, Պապերու նովանաւորութեան տակ, այս անգամ հաւատածաւարական գործունէութեան մը օժանդակելու համար*):

(Եկոչնակէ) Արշակ Ա. Ալպոյանեան

ԳՐԱԿԱՆ ԹԱՆԿԱԳԻՆ ԿՈՐՈՒՍՑ

Հանրաձանօթ մի դէմք, հանրօգուտ գործունէութեանց մէջ նշանաւոր գործիչներից մէկը, Լադարեան ձեւարանի նախկին տեսուչ պրօֆ. Կրիզոր Խալաթեան այս փնտրուարի Ց ին իր անակնկալ, վաղահաս մահով ռուս, հայ և եւրոպացի գիտնական-ինտելիգէնտ գասի մէջ մի մեծ և անմտանալի բաց է թողնում: Մի փայլուն ասող, հայագիտութեամբ, հայ ազգագրական կանաւից պակասում է:

Թէև չեմ համարձակուում գրել ու խօսել հանգուցեալ պրօֆէսորի դրական այն մեծ աշխատութեան վրայ, սակայն վստահութեամբ գրում եմ այն՝ ինչ որ ինձ յայտնի է:

Կր. Խալաթեան իր այն վստմունքները երիտասարդ հասակից է սկսել մտնել գրական ասպարէզ. 80—85 թ. նա յայտնի է եղել և անխանջ աշխատութեամբ շարունակել իր գիտական գործը մինչև իր անսպասելի օրհասն:

1885 թ. երբ առաջին անգամ պատիւ ունեցայ իմ «Վանայ սազի» առաջին հատորից մի օրինակ ուղարկել նրան, որպէս հայ ազգագրագէտ մասնագէտի, պատասխանը ստացայ նամակով մէկտեղ իր աշխատասիրած «Ծրագիր հայ ազգագրական նիւթերի» մի օրինակ: Ահա թէ ինչ էր գրում նա իր նամակում. «Կովիլի ձեռնարկութիւն, հետևի ակելին հաւաքելու, հետևիք ուղարկածս ծրագրին, աշխատիր մանրամասն անխառն տեղական բարբառով գրել»:

Այդ նամակը և այդ ծրագիրը ինձ համար եղան մի արժեքաւոր գնահատութիւն: Եւ ես հետևեցի: 1898 թ. Թիֆլիզի Հայոց Հրատարակչական Ընկ. միջոցաւ հրատարակուեցաւ «Վանայ սազի» Բ. մաս, որոնք իր ժամանակին էլ ունեցան ինձ նպաստաւոր քննադատութիւններ:

*) Եկոչնակի նախորդ թուով հրատարակուած Տիար Ալպոյանեանի յօդուածին մէջ ծանօթագրութիւն մը մտնացուած է (էջ 45, սխեմակ Ա. տող 6), որ հետեւայն է «Հայի. Տպագրութիւն, էջ 10»:

**) 1628 ին կը յիշուի թէ յոյները ունէին ազգային տպարան մը, որուն վրայ Յիսուսեանք յարձակեցան:

արում ուսուս և հայ տեղական թերթերում «Հորիզոնի»
 խմբագրութեան դէմ, ապա ինքը իր ասածները եւս է
 աւելում, խոստովանելով, որ իրեն անճիշտ տեղեկութիւն
 և առեւել խմբագրական կողմի նկատմամբ, Վաճառա-
 րանների այդ քայլին արձագանք են ապրի Շուշուայ և
 Արեանի վաճառականները, այս մի ցոյց էր, որ շատերին
 վաճառականների անաարբեր դրութիւնից գործի դիմելու
 անխորեակ էր թւում, սակայն այդ էլ մնաց լոկ խօսք,
 ի՞նչ չհաշուեմք այն, որ թիֆլիզի մի խումբ վաճառա-
 կաններ ճաշ են տուել իրենց աւագ Ա. Միլեանին, ի
 պատիւ նրա՝ այդ ուղղութեամբ եռանդուն գործունէու-
 թեան:

Վաճառականների մասին չպէտք է մոռանալ յիշել
 և այն, որ դրանց մէջ պակասում է տոնական-ժառանգ-
 ական գիծը, որ դրանք վաճառականութիւնը չեն դարձ-
 նում մի հաւանական պարագայում, որ աւելի շուտ
 պատահական բնոյթ ունին:

Մամուլում յիշում է մի արատաբեր գիծ. Սամար-
 զանդի վաճառականները հեշտութեամբ, կեզծ կերպով
 անակնաճում են և կորցնում իրենց վարկը, վատառու-
 թիւնը, Այլև ընդհանրապէս մեր վաճառականները դեռ
 վախառուական կնիք ունեն յատկապէս զիւզաքաղաք-
 ներում, մինչդեռ անհրաժեշտ է նրանց ձեռք բերել եւ-
 րպարական վաճառականութեան սովորութիւնը—քիչ աս-
 կոսի աշխատանք առնել և շատ մթերքներ տարածել:

Pessimist

ՉՈՐՄՀԱՐԻԻՐԱՄԵԱԿ ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

1512—1912

Գ.

Արգար իր դարձին Հոսմ թողած էր իր որդին
 Սուլթանչանը, որ որդեգրուած էր Պիոս պապէն (1566—
 —1572) և վերակացու կարգուած էր հայոց հիւրանո-
 թին:

Պիոսի յաջորդը՝ Գրիգոր ԺԳ., (1572—1585) վե-
 րանորոգութեան շարժումը կատեցնել յուսահատ, իր
 ուղղութիւնը արեւելքի վրայ դարձուցած էր: Ինքն
 համոզուած էր որ կրօնական բրօրականտին մէջ ամենէն
 խոշոր դերը պահուած էր գայրոցին, ուստի որոշեց հայե-
 րու, հրեաներու, իսլամներու, հունգարացիներու և մա-
 րոնիտներու յատուկ վարժարաններուն քով բանալ նաև
 հայերու յատուկ դպրոց մը Հոսմի մէջ: Սակայն այս
 որոշումը չկրցաւ իրագործել *):

*) Կերևայ թէ այս վարժարանին աշակերտելու
 համար էր, որ 1585-ին Կիլիկիոյ Ազարիա կաթողիկոսը
 կը խրկէ Յովհաննէս վարդ. ին հետը «Գրիգոր սարկա-
 ւազն քանի մը տղայով՝ վասն ուսման ի դասատուեն»,
 ինչպէս նաև Աստուածաշունչ մը, որուն տպագրութիւնը
 կը խնդրէր պապէն, յայտնելով թէ Յովհաննէս վարդ. և

Գրիգոր ԺԳ. որ նաև հեղինակն է իր անուամբը
 ծանօթ առմարին, այս նորութիւնը նաև հայերուն ընդու-
 հիլ տալու համար, առմարին գործադրութիւնը հրամայող
 կտրուակը և անոր բացատրութիւնները թարգմանել և
 տպագրել տուաւ (1584), Սուլթանչանի և Տէրգնցի Յով-
 հանդէս քահ. ի նկատմամբ: Տպագրութիւնը կատարուած է
 Dominici Basal տղարանին մէջ, և ունի կատարելագէս
 կաթողիկոսական հանգամանք: Այս գործին տպագրութիւնը
 վերջացած էր, երբ Կիլիկիոյ Ազարիա կաթողիկոսը դի-
 մում ըրաւ Աստուածաշունչ մը տպագրելու, որուն ան-
 հրաժեշտ պէտքը կընդհանրացնէր Սակայն այս առաջար-
 կը անպատասխանի կը մնայ, վասնզի Տէրգնցի կը բա-
 ժանուի Սուլթանչանէն և կանցի Վենետիկ, ուր 1577-ին
 կը տպագրէ «Սաղմոսարան» մը, օգնութեամբ տեղւոյն
 հայ գաղութին:

Թէ Հոսմի և Թէ Վենետիկի երկու տպագրութիւն-
 ներն ալ իրենց յաջորդները չեն ունենար, չենք գիտեր
 ինչու:

Մերձաւորապէս 20 տարուան լռութենէ մը յետոյ,
 Լեհաստանի մայրաքաղաքին Իլյավի մէջ «վասն փորձի»
 նախ Սաղմոս մը կը տպագրէ (1616) Բաղէչցի Քարմա-
 տանեանց Յովհաննէս քահ. զոր հոգս առեալ մեծաւ
 աշխատութեամբ և բազում ծախիւք տարի մը բոլոր
 արուեստաւորաց հետք աշխատած է, ամենչև զիրն ի
 գլուխ» հանած և անոր կազմարանս սահմանած է: Սա-
 կայն այս փորձը իր յաջորդները չէ ունեցած:

Ասոր պատճառը կամ Լեհաստանի հայոց թոյլ ան-
 տարբեր և ազդային ուժացման կենթակայ եղած ըլլալն
 էր և կամ լեհահայերը չփոթող կրօնական վէճերու շու-
 տով վրայ հասնելն:

ԺԷ. դարուն սկիզբը հայ տպագրութիւնը յիզաչը-
 ջութեան մը կենթարկուի: Մինչև հիմա կատարուած բո-
 լոր ձեւնարկները պարզ փորձեր էին, որոնք բնաւ տեա-
 կան բնոյթ չէին կրցած առնել, լծորդուած չըլլալով ժո-
 ղովորական գաղափարի մը կամ գրականութեան մը:

ԺԸ. դարուն մէջ տեական հաստատութիւնները
 երեսն կուգան, վասնզի գաղափարներ կը լծորդուին
 անոնց: Առաջինը անոնց՝ կրօնական ծաւալման գաղա-
 փարն է:

Գրիգոր ԺԳ.-ի յաջորդները ուժգին կերպով մը
 աշխատեցան իրագործելու անոր ծրագիրը, արեւելքի
 քրիստոնէութիւնը Հոսմի հնազանդեցնելու համար: Գրի-
 գոր ԺԵ. (1621—23) այս նպատակով 1622-ին հիմնեց
 կրօնական մեծ կազմակերպութիւն մը, բրօրականտա
 Քիտէն» կամ հաւաքի տարածման ժողովն, իսկ իր
 յաջորդը Ռեբրանոս Ը. (1623—1644) այս հաստատութեան
 կցեց 1627-ին դպրոց մը, քարոզիչներ պատրաստելու
 համար, և բազմալեզուեան տպարան մը՝ այս քարոզու-

Գրիգոր սարկաւազը, որ մանաւանդ այս տպագրութեան
 համար խրկուած է, Արգարի Մարգօ Անտոնիօ որպէսյն
 հետ կրնան հսկել այս տպագրութեան վրայ:

թիւնները դիրի և դիրքի միջոցաւ ալ աւարածելու համար:

Հռոմի այս կազմակերպուած արշաւանքին առաջին ննթականերէն մէկը եղաւ Նահ հայ եկեղեցին, թէ իր նոյն գաղութներում և թէ մայր երկրին մէջ: Հետևաբար Ռերբանոս տպարանը 1523-էն սկսեալ անընդմիջաբար շարունակելով պահել է իր գոյութիւնը մինչև 1784, հրատարակեց Նեղմիտ կաթալիկութիւն բուրոյղ բաղամթիւ հրատարակութիւններ, որոնց վրայ ծանրանալ չարժեր:

Հայաստանի մէկ խոր անկիւնը, Նախիջևանի Քանյայի վանքին մէջ արդէն ժ՛՛, դարէն (1333) ի վեր հաստատուած էր լատին կրօնական միաբանութիւն մը, Միաբանոյք, Ունիթուք անուամբ ծանօթ: Այս հաստատութիւնը երբ քրօթականտան հիմնուեցաւ, անոր ուշագրութեան առարկայ եղաւ Հռոմ՝ Նախիջևանի մէջ բացաւ գորոց մը, որուն ուսուցիչները Եւրոպայէն կուգային և հայ կղերէն բարձր կրթութիւն ունէին, և կը ծաղրէին հայ խեղճ եկեղեցականները: Այսպէս Խաչատուր վարդ. Կեոարացի և Միմէօն վրդ. Զուղայեցի Լեհաստանի մէջ, լատին կրօնաւորներու կողմէ ծաղու առարկայ կղան, և զգացուած՝ վերադարձին ուսման հետեւեցան:

Յետոյ կրթուած եկեղեցականներ հասցնելու համար Զուղայի վանքին մէջ բացին վարժարան մը: Սակայն Խաչատուր վարդ. միայն ասով չբաւականացաւ, զի բոլոր օրէ տեսանէք գտապարտութիւնս ի մէջ ազգացն լատինացոց, ցանկայր միշտ որպէսզի լիցի ի մէջ Հայաստանեայց և յարածամ խնդրէք հնար գիւտի արուեստիս այտորիկս: Եւ զայն կազմակերպեց զրեթէ հրաչքով, տառերը և թուղթն անգամ ինքն իր միաբաններով պատրաստելով: Սակայն զայն կատարելագործելու համար նոյնիսկ տպարանին բացման ամիսին (1639) Յովհաննէս վարդ. Զուղայեցին խրկեց Եւրոպա ուսումնասիրելու արուեստը և նոր տառեր պատրաստել ստլու համար: Յովհաննէս վարդ. ամբի մը չըջագայելէ յետոյ կանգ կառնէ Իտալիա, զի հոն միայն հայ տառերու ծանօթ էին: Հռոմի մէջ տառերը պատրաստեց, սակայն չկրցաւ պապական աններդաշնութիւնը՝ սղոցել և գիրք սպել: Անցաւ Լիպոնոս, ուր Զուղայի առաջնորդին գաղափար մը տալու համար իր ձեռք բերած տառերուն վրայ, ապագրեց Սաղմոս մը (1643): Յետոյ, տպարանը առած Զուղա դարձաւ Սակայն յուսախաբ եղաւ, զի Խաչատուր մեռած էր, և միաբաններ հակառակ էին տպարանին: Ասով հանդերձ Յովհաննէս վարդ. հոս ալ մաքառելով՝ 1647 ին հրատարակեց մէկ երկու գիրք և փորձեց ապագրել «Աստուածաշունչ» մը որ կիսահաս մնաց:

Ասիկա հայոց մէկ դարաւոր բաղձանք էր, որ չէ կարելի եղածը լրացնել: Յ. վարդ. Զուղայեցիէն առաջ, 1637-ին, Յովհաննէս Անկիւրացին «վասն պոսմայ առնելոյ զսուրբ Աստուածաշունչն» դարձեալ Եւրոպա եկած էր, գործադրելու համար այն կտակը, որ Սրապիոն կաթողիկոսը իր աշակերտին՝ Գրիգոր Կեոարացիի (Պատ. Կ. Պոլսոյ) ձգած էր: Անիկա այս գործը յանձնած էր Ան-

կիւրացիին, զի անիկա ծանօթութիւն ունէր բերդ ազգիս ֆրանկաց եթէ կարգալով և եթէ լեզուաւ: Սակայն դարձեալ դժուարութեան կը հանդիպի և չյաջողիր ապագրել Աստուածաշունչը, որ իր գլխաւոր նպատակը ըլլալ կը թուի զի «զի յոյս ունիմ, կրտէ, ի Վանատիկ կամ Կոստանդնուպոլիս կատարել» (Պատ. Հայ Տպ. Զարար. էջ 81): Բայց Վանատիկի մէջ միայն կրցաւ կատարել Սաղմոսի մը ապագրութիւնը 1642-ին երկու յոյներու նիթական օժանդակութեամբ քաղաքին յունական տպարաններէն մէկուն մէջ: Ասոր յաջորդեց «Քննութիւն սրտին անուն գործ մը և ճիտուս որդին» (1643): Ասկէ յետոյ չգիտցուի թէ ինչ եղաւ Անկիւրացին, սակայն Աստուածաշունչը տպագրուած չէ: Հետևաբար գրեթէ միաժամանակ կատարուած երկու փորձերն ալ վիժած էին: Սակայն Ասիոյ խորը վառուած ջահը, Նոր Զուղայի տպարանը, որչափ որ խաբանուեցաւ, քառասուն տարինը յետոյ (1687—88) վերաբացուեցաւ. մասնաւորապէս մաքառելու համար կաթողիկ հեղինակներու հաւատածաւական գրականութեան դէմ *): Այսպէս հոն լոյս տեսած Աղէքսանդր վարդ. ի «զգիրք, որ ասի միճաբանական» (1687) և Յովհաննէս Մըքուլի «զգիրք խկապէս համառօտ վասն հշմարիտ հաւատոյն» (1688), որոնց յիշատակարանին մէջ յայտնապէս կըսուի թէ հայ եկեղեցին պաշտպանելու համար ֆրանկներու երկրի մէջ գիրքեր սպելու հնար չըլլալով, ստիպուած են այս գիրքերը՝ թէն անարուեստ՝ ազագրել: Յիտուսեանք զգալով վտանգը պայքար բացին հայ տպարանին դէմ և վերջապէս ստոր միջոցներով յաջողեցան զայն փակել տալ 1688-ին:

Երկու հարիւր տարինը լուծեցնէ մը յետոյ միայն 1880-ին կրկին կը գործէ հայ մամուլը՝ Նոր-Զուղայի Ամենափրկչեան վանքին կամարներուն տակ, դարձեալ խորհրդանշելով հայուն քաղաքակրթութիւնը:

Կաթողիկ քրօթականային մէկ ուրիշ հակազգեցութիւն էր 1649 ին Էջմիածնայ մէջ Փիլիպպոս Աղբակիցի կաթողիկոսի բացած վարժարանը, որ ուրիշ նպատակ չունէր եթէ ոչ Կղեմէս Գալանտի և միւս քարոզիչներուն բանիւ և գրով մղած պայքարը, հայ եկեղեցւոյ դէմ, կասեցնել: Փիլիպպոսի յաջորդը Յակոբ Զուղայեցի (1655—1680), որ աշակերտ էր Զուղայի վարժարանին, կաթողիկոս ըլլալէն անմիջապէս յետոյ ջանաց հայ տպարան մը ունենալու: Այս նպատակով Իտալիա խրկեց 1656-ին Մատթէոս զպիր Ծարեցին, որ երբ տեսաւ թէ Հռոմ արգելք կը հանդիսանայ, հեռացաւ Իտալիայէն, ապա տանելու համար տեղ մը, ուր պապերն ազգեցութիւն չունենային: Եւ գնաց Ամստերդամ, ուր արդէն առկարական հայ գաղութ մը գոյութիւն ունէր: Հոլլանդահերոսական պատերազմներով յաջողած էր ազատուիլ կաթողիկ բռնապետութենէն և կազմել ազատ բողոքական հանրապետութիւն մը, որ ատ ժամանակի ամենահարուստ

*) Լէօ. էջ 141—142 Ա. հտ.

պետութիւնն էր, շնորհիւ իր համաշխարհային առևտուրին: Եւ ինչպէս հարստութիւն ու պերճանք նպաստած էին Վենետիկի մէջ գարգացնելու տպագրութեան արուեստը, նոյնը պատահեցաւ Հոլլանտայի մէջ: Երբ Մատթէոս Ծարեցի Ամսթերտամ հասաւ, հան կը գործէր Վենետիկի Ալգոններու տպարանին պէս դարաւոր կեանք ունեցող Էլզէվիթներու տպարանը, որուն տառերը կը փորագրէր Քրիստոֆոր Վան-Տիք, որ մեծ հռչակ հաճած էր: Ծարեցին ասոր զինքն և 1658 նոյնմը. 27-ին պայմանագիր մը կնքեց հայերէն երեք տեսակ տառերու պատրաստութեան համար, կաթողիկոսներու վաղեմի բաղձանքը՝ Աստուածաշունչի տպագրութիւնը կատարելու համար: 1660-ին Մատթէոս Ծարեցի հազիւ գործի սկսած մեռաւ իր տպարանը Ղլիմենց Աւետիս անուան վաճառականին փոխանցելէն յետոյ Աւետիս, որ շատ չէր ակնկալիր տպարանէն, զայն նուիրեց «Էլզմիածնի Ի. Ս. Սարգիսի» անուանը, և գործը վարելու համար Էլզմիածին՝ իր եզրօրը Ոսկան վրդ. Երեւանցիի կոչում բրաւ իրեն օգնութեան հասնելու: Ոսկան վրդ.՝ Յակոբ կաթողիկոսէ արտօնուեցաւ երթալու Ամսթերտամ, ուր զինքը կը կանխէ 1662 ին, իր աշակերտը Կարապետ վրդ. Անդրիանցի, որ մինչև Ոսկանին զալը Երասկանին դժուարին տպագրութիւնը կատարել փորձեց: Ոսկան գնաց՝ նախ Լիվոն-նովորիա, այնտեղի հայ գաղութէն նիւթական օժանդակութիւն մը ձեռք բերելու համար: Երկար աշխատութեամբ կրցաւ երեք վաճառականէ խոստում առնել Աստուածաշունչի տպագրութեան ծախքը հոգալու, շահը Էլզմիածնի, Երուսաղէմի և Ս. Սարգիսի փանքերուն միջև բաժանելու պայմանով:

Ոսկան վրդ. Ամսթերտամ հասնելուն, իրր մէթոսի մարդ գրել-կարդալու ամենէն անհրաժեշտ միջոցը՝ այբբենարան մը հրատարակեց: Ասիկա առաջին տպագրուած գասագիրքն էր:

Ապա ձեռնարկեց իրագործելու իր նախորդներէն շատերու մեծ երազը... Աստուածաշունչի տպագրութիւնը որ յաջողեցաւ գլուխ հանել երկու տարուան մէջ (1666—68): Այս նախընթաց գործը միայն կը բաւէր Ոսկանի անուներ անմահացնելու, օսկայն Ոսկան աւելին ալ բրաւ:

Ասիկա իր բոլոր նախորդներէն վեր բարձրացաւ միայն եկեղեցական միտքերով չի բաւականալով, այլ կըրթական գործին, պատմութեան և ժամանակակից գրողներու ծառայելով: Այբբենարանէն զատ, ասիկա 1666-ին տպագրեց իր խմբագրած «Քրեականութիւնը» և Առաքել Գալիլիոյի «Պատմագրութիւնը», որ Հայոց մէջ առաջին գործն է որ հեղինակ մը, իր կենդանութեան տպագրուած անսած ըլլայ: Գարձնալ ինքը տպագրեց Խորենացիի «Աշխարհագրութիւնը» (1669):

Ոսկանի այս սքանչելի գործը սակայն դարձնալ կաթողիկէ ճիրաններու պիտի մատնուէր, վասնզի Հոլլանտա հայութեան հոծ կեդրոններէ հետու, գիրքերու սպառման համար գժուարութիւններ կը ներկայացնէր: Նիւթական միջոցներէ հարկադրուած Ոսկան մտածեց Լեհաստան

փոխադրել իր տպարանը, սակայն յետոյ՝ կաթողիկէ հալածանքէն վախճալով հրաժարեցաւ այդ գաղափարէն: Ոսկանի գիրքերուն մէկ մասին նաևու մը հետ ծովամայն կորսուիրը և Էլզմիածինէն խոստացուած նպաստին չհասնելը բոլորովին նիւթական անձկութեան մատնեցին Ոսկանը, որ պարտաւէրներէն ազատելու համար ոչոչեց իր տպարանը այլուր փոխադրելու: Իր քեռորդին Համապատեան Ռադէոս, վարձուած պաշտական կղերէն, դաւեց իրեն դէմ և զինքը առաջնորդեց բրօքրականաշի թախին տակ, նոյն Լիվոնո, ուր երկու գիրք կրտպագրէ (1670) և ապա Մարտիլիա, ուր կենթարկուի հնկապութեան անունին տակ հալածանքի: Հոն կը գործէ Ռոկանի տպարանը 1673-էն մինչև 1685, տասերկու տարի, թէև ինքն 1774 ին Համապատեան քանանայի ասոր ընթացքէն խորապէս զոջացուած մեռած էր:

Գործը հալածանքներու մէջ շարունակուեցաւ մինչև որ գարձնալ անոր փորիչները Հոլլանտա տպատանի վրակ փրկութիւնը համարեցին:

Մատթէոս Վանանդեցի գլուխ կանդնեցաւ այս գործին (1685) և յաջողեցաւ վերականգնացնել Ամսթերտամի տպարանը: Իրեն օժանդակ հասան թովմաս եպ. Վանանդեցի, և Ղուկաս և Միքայէլ Վանանդեցի եղբայրները՝ եղբորորդիք առաջնոյն: Այս խումբը 1695-ին հայ վաճառականաց օգտին համար հրատարակեց առաջին հայերէն քարտէզը «Համատարած աշխարհացոյցը»—գեղեցիկ արուեստով—և յաջորդ տարին անոր սրանալին», Խորենացիի պատմութիւնը» կային:

Ամսթերտամի տպարանը շարունակեց իր գոյութիւնը մինչև 1617, հանդիսանալով միակ լուսատու ջահը և ազգային ինքնաշարժականութեան շէնքը, ընդգէմ օտար հաստատութեանց, որոնք կը շարունակէին իրենց հրատարակութիւնները մուսուանդ ուղղութեամբ մը: Այսպէս, Հոսմի Ուրբանեան տպարանը կը շարունակէր գործել, կը գործէին նաև Վենետիկի բազմաթիւ օտար տպարաններ՝ տակաւին արեւելքի հրատարակին տէր ըլլալով, հայ գրքեր, երբեմն հայերու նկատմամբ համակրանքէ մը մղուած և յանախ շահախնդրութեանէ: Այսպէս 1660-ին Նուան Պաթիստ Պոլիս հայերը սիրելուն համար հայերէն գրքեր տպագրած է: Միչէլ Պապօսի 1667-էն մինչև 1690, Նաքոմօ Մօրքէթթի 1685, և Անտոն Պոթոլի 1695—1792 մեծ մասամբ կրօնական գիրքերու վաճառքը արտադրած են, և շարունակ գէպի արեւելք տարածած են: Այնպէս որ Վենետիկ իրր լուսաւորութեան կեդրոն այդ ժամանակներու մէջ արեւելցոց միաքի մէջ գրաւած տեղը չէր կորուսած: Լեռնաբար բնիկ երկրին մէջ ազգին զարգացման աշխատելէ յուսահատ շատեր գացած են խառնուիլ Վենետիկի տպագրական շարժման և այդ օտար տպարաններուն մէջ իրենց ծախքով բազմաթիւ գիրքեր տպագրել տուած են: Եոյնիակ շատեր եղած են հայ տպարաններ հիմնելու: Այսպէս կը տեսնենք որ Գասպար Սահրառեան՝ Ոսկանի շար ողին, Թադէոս քահ. Համապատեանին հետ տպարան կը հիմնէ 1686-ին և ապա կարճ ժամանակ մը առանձին կը շա-

լուծակէ: Կարձեալ Ազուլիցի վանականն մը խօջա նահապետ Վիւլիպարեան, իրը գործնական ոգւոյ տէր մաշդ ոչ միայն տպարան մը կը բանայ 1687 ին իր տան մէջ, այլ հան կը տպագրէ առաջին աշխարհաբար գիրքը:

Վենետիկէն դուրս, բացի բրօքալանտայի Ռերանեան տպարանէն իտալական երկու ուրիշ քաղաքներ ալ, Բատուա և Լիվուռնօ, կուտան հայ գիրքեր: Բատուայի մէջ «Տիմոթէոս դաւնուկ Ասորաց արքեպիսկոպոս» 1690-ին կը տպագրէ երկու գիրքը Լիվուռնոյի մէջ 1691-ին յանկարծ կը վերադարձնու էջմիածնի Ս. Սարգսի անուամբ գործող տպարանը, որ կերտայ թէ Ոսկանի տպարանին բեկորներէն կազմուած էր: Անիկա կը գործէ մինչև 1701, ուրիկէ յետոյ կը փոխադրուի Կ. Պօլիս, նոյն անուան տակ գործելու համար (տես Լէօ, Ա. հա. էջ 317—320):

Իտալիոյ այս եւանդոս մասնակցութիւնը հայ տպագրութեան գործին, կը բազմապատուի 1715-էն յետոյ, երբ հայ գրական վերածնութեան հիմնադիրը Մխիթար Վենետիկ կը հաստատուի:

Մխիթարեանք մինչև 1789 իրենց յատուկ տպարանը կունենան, կօզտուին Վենետիկի տպարաններէն մասնաւորապէս Անտօն Պօթոլի տպարանէն, որ այնքան առաջ կերթայ որ հայերէն գրքեր տպելու իրաւունքը ինք մենաշնորհել կուզէ: Մխիթարեանք օժտուած են նաև 1719-ին ձուանի Պաշոյի *), 1729-ին Պաթիսա Ալպօիցի ձերբակալութեան, 1650—53՝ Որլանդեան Ստեփաննոսի, 1770—84՝ Վազլագեան Պետրոսի **), 1775—1785՝ Գեմետր Թեոդոսեանցի և 1786—8՝ Յովհաննէս Փիացեանցի տպարաններէն:

Այս վերածնութեան գործը որ Մխիթարեանք առաջ բերին, ուրիշ բան չէր իր թարգմանական, ուսումնական ու հմտական բովանդակութեամբ, եթէ ոչ միջնորդութիւն մը արեւմուտցի և արևելքի միջև:

Վենետիկի Մխիթարեանց տպարանին յաջորդեց նախ՝ Ի Թրիէտաէ (1776) նոյն միաբանութեան կրտսեր ճիւղին տպարանը, որ յետոյ Վիէննա տեղափոխուեցաւ (1811):

Այս տպարանը իր կարևորութիւնը ունեցած է, ոչ միայն իրը հայ տպարան, այլ նաև իրը միջազգային հաստատութիւն մը:

Անիկա մինչև 1848 կը վայելէր բացառիկ առանձնաշնորհ բովանդակ Աւստրիոյ մէջ կրօնական և դպրոցական գիրքերը տպագրելու, և մինչև այսօր Արքունեաց գործերը ինքն կընէ, պատիւ բերելով հայ անուան:

Այս երկու տեղական հաստատութեանց քով որոնք կաթօլիկ դոյնը պահէին, աննախապաշար մտածումներով

*) Հոս տպագրուած են Չամչեանի Հայոց Պատմութեան երկու հատրճները Եանիսմանեան երկու եղբայրներու օժանդակութեամբ:

***) Եինուած էր ծախիւք ձորնի Միցցիի, Գէորգ Վարագաշեանի:

ունեք ևս ձեռնարկ ըրին արեւմտեան մեծ միջավայրներու մէջ վերակենդանացնելու հայ տպագրութիւնը:

Այսպէս՝ Շանիկ Արամեան (1820—79) Բարիկի պէս համալսարանային կեդրոնի մը մէջ նոր ձեւերով տառեր շինել կուտայ և Ֆրանսացի վարպետի մը տպարանի մէջ հայերէն հրատարակութիւններ կընէ: 1859 ին կը յաջողի բանալ իր սեփական տպարանը և իր շուրջը համախմբել Բարիկ համախմբուած մատուցականները: 1862-ին կը գոցէ իր տպարանը, երբ արդէն Արքունի Մատեան իր տպարանը բացած էր: Եաննազարեան վարդալ Մանչէսթրիի մէջ հայ տպարան մը հաստատեց, և նոր ժամանակներու մէջ՝ ինչպէս ըսինք Մարսիլիա, ժընէվ և այլ կեդրոններու մէջ հայ տպարաններ գործեցին մասնաւորապէս քաղաքական նպատակով:

(Վոյնակ) Արշակ Ա. Ալպոյանեան

ՊՐՕՑ. ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԹԵԱՆԻ ԳԱԳԱՂԻ ԱՌԱՋ (Առուած է Մոսկուայի եկեղեցում, 1912 թ. փետր. 19-ին)

«Հովիտ» շարաթաթերթի խմբագրութիւնը յանձնարարել է ինձ իր ներկայացուցչութիւնն այսօրուայ սպահանդէսում: Թիֆլիզում, հայկական մտաւոր և հասարակական կեանքի արդի այդ կենդրոնում, պրօֆ. Գրիգոր Խալաթեանի մահուան առթիւ լայն թափով արտայայտուած արձագանքի շրջանիցն է «Հովիտ» շարաթաթերթի խմբագրութեան՝ հանգուցեալի աճիւնին այսօր այստեղ արուելիք վերջին հրատեղարը:

Նախորդական է բոլորէն՝ երբ մարդկային աճիւնը հանապօրհում-ուշիւրում է դէպ իր յաւիտենական հանգստի վայրը. անցնում-անհետանում է ժամանակաւորը, անցողականը. շրջապատին և գալոց սերնդին ի պահ են մնում անհատական մարդկայնութեան տուեալներ, անհատական գիտակից արտագրութեան՝ գրականը, կրթիչը, շինարարը: Բայ գերեզմանի եզրին պիտի լռեն հասարակայնութեան գաղափարի պէս-պէս շերտաւորման թեւզերը, անհամաձայն հանդիպումները:

Լազարեան ձեմարանի և Մոսկուայի համալսարանի նախկին սան պրօֆ. Գր. Խալաթեանը շարունակ քառորդ դար գործել է հասարակականի և սու առաւելն գիտականի ասպարէզներում, գործել է անձանձիբ՝ իրեն յատուկ յամառ ջանասիրութեամբ, Նրա ցանած սերմանիքն այսօր հրատարակի վրայ են՝ հասակ առած: Նա՝ իրը Լազարեան ձեմարանի և վերջինի լիկէոնի պաշտօնական կազմի անդամ—տեսուչ-ուսուցիչ-ուսուցչապետ՝ շարունակ տարիներ խնամել է աճող սերնդի կրթութեան-գասախարակութեան զժուարին գործը. նրա առաջնորդութեամբ անցել են աշակերտական նստարանից՝ ուսանողութեան, ուսանողութիւնից՝ կեանքի ասպարէզ—թարմ, կենսունակ ոյժերի տասնեակ շարաններ: Նրա գրական արտագրութիւնները՝ թէ գիտական և թէ հասարակական, թէ

սել է բարոյական պատասխանատուութիւնից զուրկ զգալ իրեն:

Բարոյական հասկացողութեան ցանկալի արտայայտութիւններ էլ կան մեր հասարակութեան մէջ, որ արտայայտում են այս կամ այն նպատակի համար ֆօնդեր կազմելու նուիրաբերութիւնների մէջ, նուիրաբերութիւններ եղել են բաւական խոշոր շափերով, որոնցից կը յիշենք կարկորները.

1) Հեմարանի վարչութիւնը յայտարարում է, որ իղմիրեան կաթողիկոսի անուան կազմուած ֆօնդը այժմ 4759 ա. 93 կ. գումարի է հասնում, որ այդ գումարով հրատարակուելու են հայագիտական գրուածքներ, մանրամասն յայտարարութիւն առայժմ պակասում է:

2) Ներսիսեան դպրանոցի հոգաբարձութիւնը յայտարարում է, որ աիկին Նուենէ Ղաթարեանի անուան ֆօնդի մրցանակաբաշխութիւնը Փ.Ա.Սիայի և հայկական դաւառների ուսումնասիրութեան յաջող աշխատանքի համար, կը լինի սոյն 1912 թուին:

3) Մոսկուայում վախճանուած Աթանաս Ժամհարեանի անուան սիզդում կտակ է լինում 250,000 ա., որ յետոյ հասնում է մի միլիոնի, հաշուելով և անշարժ կայքերը, որ այդ գումարով կովկասում բացուի գիւղատընտեսական բարձրագոյն դպրոց:

4) Թամարա Ղուկասեանի մահից յետ մնում է 1/2 միլիոն գումար, որով պէտք է Տանկահայաստանում բացուի գիւղատնտեսական դպրոց:

5) Գէորգ Նզիպարեան իր հայրենի Մ.-Ղարաքիլիսա գիւղին կտակում է 50,000 ա., որ այդտեղ բացուի գիւղատնտեսական դպրոց:

6) Արմաւիրում Թարութիւն Յարութիւնեան կտակում է իր 200,000 ա. արժողութեամբ սուներ Նոր-Նախիջևանում գիւղատնտեսական-տեխնիքական դպրոց բանալու:

7) Լեոն Մանթաշեան իր յիշատակ իր նորոգ հանգուցեալ հօր՝ նուիրում է 80,000 ա. Ներսիսեան դպրանոցի նոր շէնքի կառուցման գործին, որով ընդամենը նախկին գումարի հետ դառնում է 330,000 ա.:

8) Աստրախանում վախճանուած Մարգրիս Թամանեան զանազան բարեգործական նպատակներով նուիրում է 150,000 ա.:

9) Պօղոս Շադինեան կտակում է կովկասի նոր բացուելիք համալսարանին 50,000 ա.:

10) Արմաւիրից Աղէքսան Թորոսեան նուիրում է 40,000 ա. Գէորգեան Հեմարանում ֆիզիքական առանձին կարիքէտ կազմելու:

11) Մոսկուայից տ. Վառվառէ Բանանեան նուիրում է 30,000 ա. Գէորգեան Հեմարանում մանկավարժական մուզէյ հիմնելու:

12) Տիրուհի Պապովեան նուիրում է 5000 ուսուցիչ Սաուրօպօլի հայոց եկեղեցուն:

13) Բազուում Աւան-Իւզրաշեան նուիրում է կուլտ. Միութեան հրատարակչական ճիւղին 2000 ա. հայոց պատմութեան գրուածքներ հրատարակելու:

14) Պետերբուրգի հայոց եկեղեց. խորհուրդը յաւկացնում է 1500-ական ուսուցիչ Ալաւցիտայի, Ալէքսանդրապօլի և այլ միքանի տեղերի գարոցներին կից գիւղատնտեսական դասընթացներ հիմնելու:

15) «Բիւզանդիոնը» մի յուր է հաղորդում, որ մ. օուսահայ նուիրել է 50,000 ա. կ. Պօլսի Միացեալ Ըկերութեանը:

Այքի անցնելով այս բոլոր նուիրաբերութիւնները տեսնում ենք, որ մեծ մասը գիւղատնտեսական դպրոցների համար են արուած. մի նշան, որ մեզանում տնտեսական զարգացման համար մտածում են և այն էլ մեծ շափերով, մինչև անգամ այդ ուղղութիւնը դառնում է դերակշառը: Այն սպաւորութիւնն է ստացւում, որ փրկութիւնը մեր ժողովրդի համար այդ ուղղութիւնից է լինելու. սակայն պարզ է, որ այդ մի ժամանակաւոր յոփը շատ կուտիւն է, որը հետզհետէ պէտք է թուլանայ իր բնական ընթացքն ստանայ:

Նկատելի է ընդհանրապէս, որ նուիրաբերողները մեծ մասամբ հեռու լինելով բուն ժողովրդից, անձանօք լինելով երկրի սլայմաններին և հասարակութեան աւելի կարեւոր սլահանջներին, միայն տեսական դատողութեամբ են առաջնորդուում, մինչդեռ ծանօթ դէպքում կարու էին ուրիշ նպատակով կտակել իրենց գումարը, հեռուի նայելով խնդրին ոչ այնքան էլ յարմար ձեով են նուիրաբերում իրենց գումարները:

Իբրև ընդհանուր նկատողութիւն՝ պէտք է յիշենք որ մեր հասարակական գումարները ընդհանրապէս անծանօթ են մնում հասարակութեանը, որ զանազան ֆօնդերի և կտակների վերահսկող մարմինները, անհատները դժբաղդարար զլանում են գոնէ տարէ ցտարի կարն հաշիւ տալ այդ գումարների մասին, իրազեկ պահելու հասարակութեանը և հետաքրքրուողներին:

Բաւական չէ, որ կան հսկողներ, հարկաւոր է իմանալ նաև թէ ինչ ձևով են գործադրում այդ գումարները, ինչպէս են շահագործուում: Հասարակութիւնը որքան մտից ծանօթ լինի իր սեփականութեանը, որքան աւելի հետաքրքրուի իր հիմնարկութիւններով, այնքան աւելի կը շահուի թէ հիմնարկութիւնը և թէ հասարակութիւնը: Հասարակական գործերում հաշուէտուութիւնը անհրաժեշտ պահանջ է, մինչդեռ մեզանում այս պահանջ բաւարար չափով չէ կատարուում:

Pessimist

ԶՈՐՄՀԱՐԻԻՐԱՄԵԱԿ ՀԱՅ ՏՊԱՌՈՒԹԵԱՆ

1512—1912

Գ.

Յակոբ կաթողիկոս Զուղայեցիի նախաձեռնութեամբ արուած զարկը հայ սպաւորութեան, Եւրոպայի մ. բեղմնաւորիչ յետոյ, հալածուած կաթողիկ աններողութեամբ:

թեմէն, ժԸ. դարուն սկիզբը՝ Լիվոնայէն Կ. Պօլսի կապաւանէր: 1567-ի կանխահաւ փորձէն յետոյ, 1677-ին երկրորդ ձեռնարկ մըն ալ եղած էր, Երեմիա Չէլէպ Քէօմլերճեանի կողմէ, սակայն այնպիսի խառնակութեանց պահու մը, որ կարելի չեղաւ դայն հաստատուն ու տեական դարձնել: 1698-ին այս տպարանը կը վերաբանայ Գրիգոր Մարգուանցի դպիրը, որ Հայաստանի մէջ Ռեւիթոսական շարժման ազգեցութեամբը ուսնացած կրթական միակ հաստատութեան Ամրոտու վանքին աշակերտներէն էր և 1684-էն ի վեր Կ. Պօլսի կը գրտնուէր:

ժԸ. դարուն սկիզբը՝ այլևս Կ. Պօլսի թրքահայոց վարչական ու մտաւորական կեդրոնը դարձած էր:

Մասնաւորապէս Օսմ. կառավարութեան անկումը սկսած էր և Եւրոպա դէպի արեւելք կը թափանցէր հարկադրելով այնպիսի դաշինքներ, որոնցմով եւրոպական կառավարութիւններ մասնաւոր առանձնաշնորհներ կը ստանային:

Այսպէս լատին կրօնաւորները կը հովանաւորուէին Ֆրանսական և աւստրիական կառավարութիւններէն և աւելի արձակ համարձակ իրենց հաւատածաւարական գործունէութեան կը սկսէին Կ. Պօլսոյ մէջ և գաւառները: Մասնաւորապէս ժԸ. դարուն սկիզբը կաթոլիկական շարժումը կը սկսուի: Հայ պատրիարքներէն հովանաւորուած տպարաններու դէմ մրցելու համար կաթոլիկ կղերը անբաւական համարելով Վենետիկեան տպարաններու՝ Հոսմի Վատիկանեան և այլ հրատարակութիւնները, 1705-ին Կ. Պօլսի Պէյ Օղլու թաղին մէջ Պետրոս Լափնացիին ձեռամբ կը բանայ տպարան մը, մինչ արդէն Էջմիածնայ և Ս. Սարգիսի, Աստուածատուրի (1700-էն մինչև 1818 անքնդհատ գործած է, փոխանցուելով գաւառներուն), Գրիգոր Մարգուանցիի (1698—1734), մայր եկեղեցւոյ շրջափակը հաստատուած Սարգիսի (յաջորդ Ս. Էջմիածնի և Ս. Սարգիսի տպարանին, 1701-էն 1752 գործած է իր Մարտիրոս որդիէն շարունակելով) տպարանները գործել սկսած էին, և անկախ ու անկաշկանգ կը գործէին: Գոլտի խոհական ընթացքովը երբ պահ մը կաթոլիկական վէճերը դադարեցան, ինքնին տեղի տուաւ կաթոլիկ գործունէութիւնը և տեղի տուաւ անոնց տպարանը, մինչ մէկ կողմէն կը բացուէին ուրիշ հայ տպարաններ:

Այսպէս, 1736-ին Բարսեղ և Յակոբ Մերաստացի եղբայրները (փ՛լ. 1755), 1737 ին՝ Աբրահամ (փակուած 1746), 1750 ին՝ Ստեփաննոս Պետրոսեան (50 տարիէն աւելի գործած է), 1745 ին Գարբիէլ դպիր, հեռզհեռէ կը բանան տպարաններ:

Սուլթան Սէլիմ Գ. ի իշխանութեան շրջանին երբ թուրք կառավարութիւնը կը ձեռնարկէ պետական վերակազմութեան, զինուորական և վարչական բարեփոխումներ, այդ շարժումը անհետեանք չմնար, և հպատակներն ալ օգտուին անկէ:

Սուլթան Սէլիմ Գ. նոյնիսկ իր գահակալութեան տարին (1789) արտօնելով հպատակ հասարակութեանց

նախակրթարաններ բանալու, կրօնական պայքարը տեղափոխեց կրթական գետնի վրայ, Շնորհք ամիրա 1790-ին կառոյց Մայր վարժարանը և անոր քով կառոյց սեփական տպարանը, որ գործած է մինչև 1841, Կաթոլիկ կղերը անմիջապէս ինքն ալ առիթէ օգուտ քաղեց Ղալաթիոյ Ս. Բենեդիկտոս լատին եկեղեցւոյն մօտ 1790 ին հիմնելով տպարան մը, ուր քանի մը գիրքեր միայն տպուեցան: Այս տպարանը երկար լուսթեմէ մը յետոյ անցեալ դարուն քառասունական թուականներուն երբ կրօնական նոր վէճեր ծագում աւած էին, վերստին գործունէութիւն ցոյց տուաւ:

Գարեցական-կրթական շարժման և Եւրոպայի հետ յարաբերութեանց յանախութեան հետեանքով, տպարաններու գործունէութիւնը կը կրկնապատկուի, և աւելի նոր բմբուսումով տպագրիչներ գործել կը սկսին:

1824-ին Աբրահամ ամիրա Թերզեանց տպարան մը կը պահէ (փակուած 1827), սոսկ օգտակար հրատարակութիւններ ընելու համար, ինչ որ Նշանակելի երևոյթ մըն է նկատի առնելով իր գիրքը:

1829-ին կը հաստատուի Արապեան տպարանը, որ մինչև 1859 կանոնաւոր կերպով գործած է և մեծ արգիւնք տուած: 1839-ին ձեռնարանին կից կը կազմակերպուի տպարան մը, ձեռամբ Յովնանէս Միւհէնտիսեանի, որ 1843-ին իր յատուկ տպարանը կը հիմնէ (փակ, 1878):

Ինչպէս կաթոլիկ կղերը հաւատածաւարական միտումներով թէ Եւրոպայի և թէ արեւելքի մէջ տպարանական գործին մղում տուած էր, նոյնպէս նաև անցեալ դարուն առաջին քառորդին, կրօնական նոր շարժումը— բողոքականութիւնը, իր մասնաւոր ազդեցութիւնը կուսնենայ հայ տպագրութեան և գրականութեան վրայ:

Միսիոնարները՝ արեւելքի քրիստոնեաներուն համար Մալթայի մէջ կը բանան յատուկ տպարան մը, որ 1833 ին կը փոխադրեն Իզմիր, որ կը գործէ մինչև 1854, Իսկ Կ. Պօլսոյ մէջ՝ Չըրչլի (1839—1880) և Միւստեան (1842—1880), և ներկայիս Պոյանեան տպարանները այս նոր քարոզութեան արտայայտիչներն կրկնու: Միւս կողմէ ժամանակին պահանջներու, մասնաւորապէս լրագրութեան համար, տպարաններ կը բարգմանան ու անոնց թիւը զգալապէս կանի: Ասոնց մէջ Նշանաւոր կը հանդիսանան Քիւրքճեան (1857—1870) Հայաստանի, (1846) Մայիսի (1852), Տերոյեցի (1857—1880), Արեւիկեան (1857) Ազգասիրական Ընկերութեան, Արամեան (1864), Հայաստանեայց (187—1880) և այլ բազմաթիւ տպարաններ, որոնց մի առ մի յիշատակութիւն ընելը կարելի չէ:

Կ. Պօլսոյ միջավայրի համեմատաբար զարգացած վիճակը պատճառ եղաւ, որ Էջմիածնայ կաթոլիկոսները իրենց աշակերտութիւնը կեդրոնացնեն այս գաղութին վրայ, ուր կը խրկէին ուսում առնելու միտքներովեան ամենէն ընդունակ անդամները:

Մասնաւորապէս Էջմիածին այլևս յատ լուս հաս

կացած էր Հռոմի պապերուն խոստումներուն նշանա- կութիւնը: Հասկացած էր թէ Հռոմ թշնամի է հայոց զարգացման և որոնց կրօնական հպատակութեան միայն կը բաղար:

Հռոմի հաղածանքները, լոյսի խնդիրը՝ բուռ մը հայ տպագրիչները՝ որոնք հայ կաթողիկոսի անունով Եւ- րոպա գացած էին, ստիպուած էին բողոքական երկիր մը Հոլլանտա ապաստանելու: «Էջմիածնայ և Ս. Սարգիս» տպարանին վարիչները շարունակ Էջմիածնայ գահակա- րներուն հետ յարաբերութեան մէջ եղած էին և իրախու- սուած էին:

Երբ 1701-ին Լիվոնոյի մէջ կարճ գործունեութենէ մը յետոյ Էջմիածնայ տպարանը Վ. Պօլիս փոխադրուե- ցաւ, մասամբ հարթուեցան այն դժուարութիւնները, որ այդ հեռաւոր գաղութին մէջ հաստատուած տպարանը կը շրջապատէին:

Մանաւանդ պէտք է դիտել թէ քաղաքական կեր- պով ալ Հոլլանտայի անկումը սկսած ըլլալով, աւելի ևս կը դժուարանային յարաբերութիւնները:

Ասով հանդերձ մենք տեսնք թէ տեղւոյն հայ վա- ճառականներու օժանդակութեան վրայ յոյս դնելով 1704- էն 1717 Ղուկաս Վանանդեցի Ամսթերտամի մէջ տպա- րան մը հաստատուելու փորձը ըրած էր: Սակայն գաղութին նուազելովը, գործն ալ ինքնին անկարելի դարձած էր, մանաւանդ որ գլխաւոր սպառող կեդրոնին մօտ մէկ քանի տպարաններ գործել սկսած էին, նոյն այդ քաղա- քէն ճիւղաւորուելով:

Եթէ դիտուել, ուշադրութեամբ պիտի տեսնուի թէ հայ վաճառականութեան պատմութիւնը և հայ տպարա- նաց պատմութիւնը գրեթէ լծարդուած են իրարու հետ:

Մենք Վենետիկի հայ վաճառականներուն կը պար- տինք տպարանի սկզբնաւորութիւնը և բազմաթիւ տպա- րաններու կազմակերպութիւնը:

Ամսթերտամի հայ վաճառականաց գաղութն էր Ոսկանի և յաջորդներու պաշտպանը Լիվոնոյի հայ վա- ճառականներն էին հոն կազմուած տպարաններուն օժան- դակները:

Ամսթերտամի գաղութը՝ մէկ խօսքով Հայաստանի բնիկներէն կազմուած էր, որոնք վաճառականութեան համար գացած էին մինչև Հոլլանտա:

Այդ գաղութը կամ Կ. Պօլսոյ կամ Չմիւռնիոյ ճամ- քով անցած էր Եւրոպա, և իր ճիւղերն ու իր գործակա- րներն ունէր միշտ արեւելքի դուռն հանդիսացող այդ քա- ղաքներուն մէջ: Մասնաւորապէս Չմիւռնիոյ յարաբերու- թիւնները աւելի սերտ էին Ամսթերտամի հետ և Էջ- միածնայ հետ, զի Չմիւռնիա, աւելի անխառն հայ գա- ղութ մը ունէր: Այս կապը բացորոշ կերպով կը հաստա- տուի սա իրողութեամբ, որ Իզմիր՝ մինչև 1828 ուղղակի Էջմիածնէն կը ստանար իր առաջնորդները, որոնք իրենց հոգևոր իրաւասութեան սահմանին մէջ ունէին նաև հեռաւոր Ամսթերտամի հայ գաղութը:

Երբ Ամսթերտամի հայ գաղութը նսեմացաւ, Չմիւռ- նիոյ հայ գաղութը կը պահէր իր շքեղութիւնը: Հետևա-

բարձր հուանօքէն Ամսթերտամի տպարանին աշխատա- րանէն մէկը՝ Մարկոս՝ 1759-ին կը բանայ Իզմիրի մի- տոյարան մը, որ մինչև 1763 կը գործէ: Հոն տպուած Եզնիկի յիշատակարանէն կը հասկացուի թէ այս տա- րանին վարիչ ումն էր Էջմիածնայ միաբան Աստապատ Արրահամ եղ. և Միւռնեաց գաղտնի մէկ ներկայացուցիչ — Երեսնցի Սիմէօն վրդ. որ երբ 1763-ին Ամսթե- րտամի հայ կաթողիկոս ընտրուեցաւ, ուղեց նոյնիսկ Էջմիա- ձնայ մէջ հիմնել տպարան մը, և որովհետև ծանօթ է Մարկոսի, կը գրէ Չմիւռնիոյ առաջնորդ Ղուկաս վրդ. (1765), որ իր թեմին մաս՝ Ամսթերտամի մէջ Ստա- ղուպոյեցիի շինելու տուած տասեւրը, որոնք չէր կրց- րած օգտուել տպարանը չկարենալ կազմակերպելուն համար, առնէ և իրեն իրկէ: Ենտոյ կը հրամայէր որ Մարկոս իր տպարանովը Էջմիածին փոխադրուի Սակայն իր բաղձանքները կարելի չեղաւ գործադրել, ուստի իր ա- շադրութիւնը ուրիշ կողմ դարձուց: Հեղկահայ Գրիգոր սոգա Չաքիկեցի օժանդակութեամբ 1771-ին կառու- տպարան մը Էջմիածնի մէջ, և Ամսթերտամի մէջ նա տասեւր փորագրել տալով՝ անոցմով տպագրութեան սկսաւ: Սակայն թուրք պէտք էր և պայն Եւրոպայի բերել Էջմիածին շատ դժուար էր: Հետևաբար տպարա- նին յարակից, Սիմէօն յանդուգն գաղափարը ունեցա- 1774-ին Եւրոպայէ բերուած արուեստագէտներու միջոցա- րանալու նաև թղթի գործարան մը, դարձեալ Մատրո- սարնակ Չաքիկեցի Գրիգորի օժանդակութեամբ:

Էջմիածնայ տպարանը՝ անկէ յետոյ մինչև այսօր կը գործէ կարճ ընդհատումներով, և յաճախ նորակա- ըրաններով:

(Վերջը միւս անգամ)

(«Կոչնակ»)

Արշակ Ա. Ալաօյաննան

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

«ՄԱՅԻՆՆԻ ԼԵԶՈՒԻ ՄԵԹՈՂԻԿԱ», Թ. Խզմար- ևանի:

Այս աշխատութիւնը նոյն հեղինակի «Ուսուցման և դաստիարակութեան հոգեբանական հիմունքները» գրքի պէս գործ է, այսինքն խիստ անհաւասար բաժիններէ կազմած մի ծաղկաքաղ, մի կօմպիլիացիա, ուր որ միւս- սաւորող ճրագ պակասուած է, որպէսզի կցկցած բաժին- ների էութիւնները լուռ նշմարուին, նախ գայիս են ա- լնլորդ փիլիսոփայութիւններ և տեխնիքական ս- նուններ սահմաններ, որտեղից անզապար իմ- նում ենք, թէ փիլիսոփաներից և մանկավարժներից սրտը շշտա ճիշտ են ասում... Ենտոյ գալիս է գրագիտու- թեան ուսուցումը, ուր սուտն ու զորդը այնպէս խա- նուած են շփոթուած է, որ դժուար է կարգին ստա- նորդութիւն ստանալ: Աւելի օգտակար և հետաքրքր-

ՅՕՅԵԼԵԱՆՆԵՐ

Երեք գլխաւոր և աւելի հասարակական ուրիշ հանաւոր նշանակութիւն ունեցող յօրեղեաններ կան մեր առաջ երեքն էլ նշանաւոր, երեքն էլ հարկաւոր, որոնք պէտք է կատարուին ըստ արժանոյն:

Այդ յօրեղեաններից մինք հայ տպագրութեան 400-ամեակն է. երկրորդը՝ «Մշակի» 40-ամեակը և երրորդը՝ Շուշուայ թեմ. դպրոցի 50-ամեակը:

Մենք համաձայն չենք՝ յօրեղեաններ չպէտք է կատարել աւարկոյնների հետ, որովհետեւ նրանց տօնելով ժողովուրդը հետաքրքրուում է իր ազգային պատմական անցեալով, իր նշանաւոր գործիչներով և համոզում է կազմում, որ պէտք է հասարակական գործիչներին—մեր մէջ տանջուած ու նահատակուած—պատուել, ապահովել և հասարակական գործն էլ խրախուսել:

Մեր վերջ յիշած յօրեղեանները միաժամանակ դրուած են հրապարակի վրայ. պէտք է նրանց կատարելու հերթը—չարքը այնպէս դատաւարել, որ մէկը միւսին արգելք չլինի, չխանգարէ:

Որովհետեւ այդ յօրեղեանների կատարուելով ձևի, անուան և տօնախմբութեան համար չէ, այլ նրա հետ կապուած է մի օգտաւէտ գործի, ձեռնարկութեան, մի բարի նպատակի յաւերժացումը:

Եւ որովհետեւ ծանրութիւնը կրօզը և նիւթական օգնութիւն տուողը հայ ժողովուրդն է և այն էլ նրա մի սրուշ, գիտակցող դասը. ուստի պէտք է չլլատել, չբաժանել նրան, պէտք է դիւրութիւն, միջոց տալ շունչ քաշելու՝ մասնակցելու համար բոլոր յօրեղեաններին իր նիւթական օգնութեամբ—կամաւոր նուէրների օժանդակութեամբ:

Եւ մեր կարծիքով այդ յօրեղեանների կատարելու շարքը պէտք է կազմել և սկսել ոչ ըստ նրանց համեմատական առաւելութեան և աւելի կարևորութեան, այլ որի արդիւնաբեր կատարման համար կարելի կը լինի շուտ պարաստուել, գլուխ բերել:

Մեր կարծիքով պէտք է առաջ, հէնց ներկայ տարում, կատարել «Մշակի» 40-ամեայ յօրեղեանը, որի համար արդէն կազմուած է մաս-

նաժողով և կամաւոր հանդանակութիւն—մի միայն նրա հրատարակութեան շարունակութիւնը—գոյութիւնը ապահովելու նպատակով—գործը սկսուած է:

Ապա հայ տպագրութեան յօրեղեանը, որը համազգային գործ է և նշանակութիւն ունի, որին մասնակցելու են ի սփիւռս աշխարհի ցրուած, գտնուած պանդուխտ հայութիւնը, ուստի և դրա համար հարկաւոր է նախ՝ կազմել մի կենդրոնական պատկառելի, հեղինակաւոր և բոլոր հայութեան վստահութիւնը մայեղող Մասնաժողով, այլև հայութեան իւրաքանչիւր կենդրանում ենթամասնաժողովներ, նոյնիսկ դաղթափայրերում՝ հօգևոր իշխանութեան ներկայացուցիչների մասնակցութեամբ, որը մի հսկայ և բարդ գործ է և պահանջում է աւելի երկար ժամանակ, աւելի պատրաստութիւն, որպէսզի հնարաւոր լինի աւելի փառաւոր կատարել և ազգային մի խոշոր ձեռնարկութեամբ, մի գործով յաւերժացնել այդ նշանաւոր համազգային տօնը:

Ինչ վերաբերում է Շուշուայ թեմական հօգևոր դպրոցի 50-ամեակի յօրեղեանին, որի նպատակն է բարւոքել նրա նիւթական գրութիւնը, ազատել նրան մուրալով իր գոյութիւնը քաշ տալուց, որը մի կարևոր գործ է՝ ի նկատի ունենալով Շուշուայ և նրա շրջակայ բազմաթիւ հայ ժողովրդի ազիտութիւնն ու յետամնացութիւնը, աւելի քան մասնաւոր բնաւորութիւն ունի:

Մեր կարծիքով, այդ մասին հոգայու պարտականութիւնը ընկնում է մեր շուշեցի եղբայրների վրայ:

Պատմական նշանաւոր Շուշին այժմ ունի այնպիսի զաւակներ, թէև ոչ Շուշում ապրող, որոնք մտաւոր և նիւթական մեծ կարողութեան—միլիոնների—տէր են, որոնցից շատերի Alma mater-ի մասին հոգայք, կրկնում ենք, նրանց գործն է:

ԶՈՐՍՀԱՐԻԻՐԱՄԵԱՆ ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

1512—1912

Ե.

Մարկոսի տպարանը Զմիւռնիոյ կեդրոնի մէջ՝ դէպի Էջմիածին տնցք մըն էր պարզապէս Իրական շարժումը,

Կ. Պօյսոյ կեդրոնէ ճառագայթող և կրթական սփռու-
թեան մը արդասիք, աւելի ուշ ժամանակներու մէջ երե-
ւան պիտի գար, մասնաւորապէս օտար քարոզչական
ձեռնարկով մը սկսելով:

1833-ին Մալթայէն փոխադրուած բողոքականաց
տպարանը այդ կայծը կըլլայ և անօր կը յաջորդեն
ուրիշներ:

Պետրոս Մուսուֆեանի օժանդակութեամբ կը բա-
ցուի Մետրոպեան վարժարանի (փկ. 1840), 1840-ին
Ստեփաննոս Պապօսեանցի, 1851-ին՝ Տէտէեանի, 1864-ին
Թաթրիկեանի, 1883-ին՝ Մամուրեանի տպարանները,
որոնք բնագմաւոր գործունէութիւն մը ունեցած են
մասնաւորապէս թարգմանչական գործունէութեամբ մը:

* *

Երուսաղէմէ վանքն ալ կը խառնուի այս ընդհա-
նուր ոգևորութեան որ թրքահայերը ցոյց կուտային ան-
ցեայ դարուն սկիզբը և 1834-ին կուեննայ իր սեփական
մամուլը Պետրոս պէյ Մուսուֆեանէն նուիրուած: Ասիկա
մասնաւորապէս 1886—80 շատ նշանակելի արդիւնաբե-
րութիւն մը ունեցած է:

Խրիմեան՝ մեծ գաղափարներու առաջնալը՝ Հայաս-
տանի ամենէն խուլ մէկ անկիւնը, դարուոր մենաստան
մը, Վարազայ վանքը փոխադրելու գաղափարը կը յղա-
նայ հայ մամուլ մը միտքերը տեղւոյն վրայ լուսաւորելու
համար: 1854-ին նախ կը հիմնէ Սիլուար և ապա 1858-
ին կը յաջողի փոխադրել Վարազ, ուր ոչ միայն Արծիւ
Վասպուրահանին, այլ նաև կարգ մը գիրքեր կը տպագրէ:
1863-ին Մուշի, Կլակայ վանքն ալ կուեննայ իր տպա-
րանը և հոն կը տպագրուի «Արծուիկ Տարօծայ»:

Արմաշու վանքը նաև ունեցած է պահ մը իր
տպարանը (1869—79), մինչ Կիլիկիոյ աթոռին մէջ
տպարան մը հաստատելու փորձը վիժած է բունակալու-
թեան շրջանին մտածուած ըլլալով: 1850-ին՝ Մուրատեան
և 1864-ը Ճանիկ Արամեան Նիկոմիդիոյ մէջ տպարան
բանալու փորձ ըրին: 1871-էն 75 Արվազի մէջ ալ կար
հայ տպարան մը:

Բունակալութեան անկման հետ ի թուրքիա գրեթէ
ամեն կեդրոններու մէջ այսօր տպարաններ կան, և շորս
հարիւրամեայ տարեդարձը հայ տպագրութեան թրքա-
հայց կոզմէ կը ողջունուի այսօր տպարաններու առա-
տուութեամբ մը որ իր նմանը գրեթէ չէ ունեցած անցեալին
մէջ:

* *

Ըօինք թէ հայ վաճառականին հետևորդ եղած է
հայ տպարանը, Հայ վաճառականները Եւրոպայէն դուրս
մասնաւորապէս երկու տեղ արտասովոր բարգաւաճումի
մը հասան:

Հիւսիսի մէջ՝ Ռուսիա և Հեռուոր Արևելքի մէջ
Հնդկաստան, ուր հաստատուած հայ գաղութը մեծափար-
թամ վիճակի մը հասած էր անգլիական տիրապետութե-
նէ առաջ: Անգլիացուց և Եւրոպացուց մուտքը ի Հընդ-
կաստան մասնաւորապէս յեղաշրջեց այս գաղութին մտա-
ւոր վիճակը և ըմբռնողութիւնը:

Մենք տեսանք արդէն թէ գիպուածով հարստացած
հայ մը՝ Եանմիրեան հայ ազգին ազատագրութեան առա-
ջելութիւնը ստանձնած էր 1772-ին Մատրասի մէջ
տպարան մը բանալով և զայն պահպանելով ինը տարի
անընդհատ: Պարձեալ անգլիական օրինակէն ազ-
գուած Մատրասի մէջ Յարութիւն քահ. Եմաւոնեան
Երրագեցի կը հաստատէ տպարան մը 1789-ին և կը
ձեռնարկէ առաջին հայ լրագիրը «Ազդարար»՝ հրատա-
րակելու 1794-ին, սակայն նիւթական պատճառներով կը
փակէ իր տպարանը:

Այն տոնն ուրիշ վաճառական մը՝ Սարգիս Ծա-
տուր Ազաւալեանց 1810-ին կը բանայ տպարան մը:

Բրօքականտան՝ սակայն հոն ալ իր վրդովեցնող
թաթը կերկարէ 1808-ին հոն խրկելով հաւատորս վար-
դպետներ, որոնք սկսան հրատարակութիւններ ընել,
մինչ Կայկաթայի մէջ արդէն հիմնուած էր հայոց Ս.
Նազարէթ եկեղեցւոյն բակը Յովսէփ ք. Ստեփաննոսեանի
տպարանը (1796), որուն 1811-ին կը յաջորդէ Մարգա-
սիրական ձեմարանին տպարանը բացուած Աւետ Զնթու-
լումէ: Հոն տպուած են Այտալեան Յովհաննէսի և Թա-
ղաղեանի բազմաթիւ գործերը:

Այս տպարանը մինչև անցեալ դարուն կէսը գոր-
ծած է անընդհատ:

1821-ին Կայկաթայի մէջ գոյութիւն ունին Յորդա-
նեան պարոն Պօղոսի, 1823-ին Սանտիբուսեանց և
1842-ին Վիլէնեանի «Արծիւ» և 1845-ին Արարատեան
ընկերութեան տպարանները:

Բողոքականութիւնն հոն ալ իր ազդեցութիւնը ցոյց
կուտայ և 1833-ին Մկրտական միսիոնարաց տպարանին
մէջ հայերէն գիրքեր կը տպուին: 1848-ին Մատրասի
մէջ կրկին փորձ մը կըլլայ հայ տպարանը վերակենդա-
նացնելու, սակայն չյաջողիր: Նոյնիսկ հեռուոր Աինկա-
բուրի մէջ 1849-ին տպագրական փորձեր եղած են, ինչ
որ նշաններն են այդ գաղութի բարգաւաճման: Եւրո-
պական մրցումը սակայն նսեմացուց հայ վաճառակա-
նութիւնը և անօր հետևորդ տպագրութիւնը խաբանուե-
ցաւ:

Հնդկահայը սակայն անձկամիտ չէ: Գիտէ թէ ինքն
շատ փոքր թիւ մը կը ներկայացնէ և մայր երկրէն հե-
ռու կապի, հետևաբար կուզէ օգտակար ըլլալ բուն
մայր երկրին:

Եանմիրեան իր տեսակին մէջ միակը չէ: Մուրատ-
եան, Ռաֆայէլեան և այլ հնդկահայ բարերարներ անոռ-
ուր դէմքեր չեն: Մեկենասներ գրեթէ անթիւ անհամար
են:

Այս դպացումը իրենց հետ տարած են ուր որ գա-
ցած են:

Մասնաւորապէս Զուգայեցի վաճառականները մտքի
դործիչին բարեկամ են և այն ամեն տեղ կը քաջայերեն:

* *

Հայոց յարաբերութիւնները Ռուսաց հետ Մեծն
Պետրոսի օրերէն կը սկսին և ասոնք իր ծագման օրե-
րուն իսկ երկու տեսակ ընոյթ ունին, վաճառականական

և քաղաքական

Քաղաքական գործունեութեան առաքելներէն մէկն էր Յովսէփ եպ. Արղութեանց՝ Հիւսիսականաց առաջնորդը, որ ինչպէս ամեն հայ գործիչ, կ'ապաւինի հայ հարուստներու նիւթական աջակցութեան ազգային վերականգնութեան գործը պատրաստելու համար:

Իր գործակիցներէն մէկն կը հանդիսանայ Խօջա-մայի որդի Խալդարեանց Կրիզոր, որ կրտէ թէ քցանկութիւն ունէի տպարան մը ունենալու, որպէսզի կարող ըլլամ ազգիս համար կարեոր գիրքեր հրատարակել: ...Պէտք եղաւ ինձ Հեղինատանէն փոխադրուիլ յԱնգլիա և ի քաղաքն Լոնտոն, ուր... տասը տարի մնացի: Այս երկար միջոցի՝ ետէէ էի արուեստաւոր մը գտնելու, որ փորագրէր և տայր ինձ հայկական տառերն: Իր փափաքը կը լրացնէ անգլիացի մը, երեք տեսակ տառերը պատրաստելով, որոնցմով Լոնտոնի մէջ 1780-ին կը տպագրէ Joh. Rivington-ի տպարանին մէջ «Իուստուութիւն հաստոյ եկեղեցւոյ Հայաստանեայց» անուն գիրք մը, քարտահան եղեալ ի Կանձ Արամեան կոչեցեալ գրքոյն: Խալդարեանցի աշխատութեամբ և բազմաթիւ խնդրոյ գերապայծառ Տեառն Յովսէփայ վարդապետի և առաջնորդի Աշտարխանու և Նոր-Նախիջհանի: Այս փոքրիկ գրքոյկին կցուած է «Հաստով խոստովանիմ» ազօթքը լատիներէն, ֆրանսերէն և անգլիերէն թարգմանութեամբ: Այս գործը Յովսէփ եպ. ին գիրերուն վրայ զազափար մը տալու համար տպագրուած է և երբ անիկա հաւնած է, Խալդարեանց Կրիզոր անմիջապէս Լոնտոնէն անգլիացիներած է Ինթերպուրիկ և հոն տպագրած է ժամագիրք մը (1783) և ուրիշ գիրքեր (մինչև 1786) միշտ Յովսէփ եպ. ի հրամանով կամ թելադրութեամբ:

Սակայն այս բազմածախս ձեռնարկը կործանեց հարուստ Ջուղայեցին, և Արղութեանց՝ անոր թելադիրը, տպարանը իսպառ չխաբանելու համար, Խալդարեանցի տպարանին վարչութիւնը ինքն ստանձնեց, և անոր պարտքերը աչիով, օժանդակութեամբ Աժտարխանի վաճառական Հայերուն, տպարանը փոխադրեց Նոր-Նախիջհան, նախնեաց գործերը տպագրելու ջանադրութեամբ:

Տպարանին կցեց նաև դպրոց մը և այդ երկու հաստատութիւնները մատակարարելու համար, Հեղինատան, Վ. Պոլիս, Պարսա հաստատուած վաճառականաց դիմուհները ըրաւ և կրցաւ շատ մը գրքեր տպագրել մինչև 1797: Յովսէփ եպ. մասնաւոր ծրագրով մը կը գործէ ինչպէս կը տեսնուի Անիկա ամեն կողմ դիմում կ'ընէ դրչադիր Հայոց պատմութիւն մը ձեռք բերելու և ասոր նման շահեկան ձեռագիրներ ստանալու համար *):

1828-ին Արարատեան նահանգը Ռուսաստանի կցուելով, Հայոց գործունեութիւնը ի Ռուսաստան կը մեծնայ:

Արղութեանցի դերը կը կատարէ այս անգամ Ներսէս Աշտարակեցի՝ Թիֆլիզի առաջնորդը, որ քաղաքա-

կան ծրագրին հետ մշակելով կրթականը կառուցած էր Ներսէսեան վարժարանը, և անոր կցած՝ 1814-ին, տպարան մը որ արդիւնաւէտ գործունեութիւն մը կ'ունենայ մինչև մատարապէս 1870 թ.:

1829-ին Լազարեան ձեմարանի յարակից կը հաստատուի տպարան մը, որ յիստունական թուականներու կը վաճառուի, օտար տպարանին մէջ հրատարակութիւններ ընելը աւելի շահաւոր համարուելով:

1856-ին Խալիպեան կրթարանն ալ կ'ունենայ իր տպարանը, որ վարժարանին փակումէն յետոյ կը վստահուի Տ. Արթուրեանի և կը փոխադրուի Ռոստով:

Ժամանակին հոլովմամբ ուսուսչայոց կրթական գործն ալ կազմակերպուելով, մասնաւորապէս Ներսէսեան վարժարանէն հասնող սերունդներով, Արեւիկեան Հայոց մատարական կենդրոնը կը դարձնեն Թիֆլիզուր հեղինակէ կը հաստատուին տպարաններ, որոնց մէջ նշանակելի են Պատկանեանի (1850), Էնֆիանեանի (1860), Շիրմագանեան Գալուստի, Երիցեան Աղէքսանդրի, Մ. Ռոսինեանց և Ընկ. տպարանները:

Այսօր ուսուսչայոց այս կենդրոնին մէջ Հայ, Ռուս և Վրացի քաղմթիւ տպարաններ կան, որոնք Հայկական գրքեր կը հրատարակեն:

Կովկասի գլխաւոր քաղաքներն ալ, ինչպէս Երևան, Եւլի, Բագու, Աղէքսանդրապոլ ունին իրենց տպարանները և արդիւնաւէտ կերպով կը գործեն:



Ահա այդ տառապալիւն ուղին որ հայ տպագրութիւնը ազգին բազմաշարժար կեանքին պէտ, կտրած անցած է, 1512-ն մինչև 1912: Այժմ սրբուած Հայութիւնը՝ Նոր-Ջուղայէն մինչև Ամերիկա, գրեթէ բոլոր կենդրոններու մէջ իր մտքին սնունդ հայթայթող մամուլ ունի: Այլևս չկայ ոչ անոր վրայ Հռոմէական բրոնզականութիւնը Հայ մամուլը ազատ է, և օգտաւէտ ազգին ինքնագոյութեան մէկ սիւնը հանդիսանալով:

Առանց անոր հիմնադիրներուն տոկուն գործունեութեան և անոնց յանձնառու եղած գրկանքներուն, թերևս այսօր աղճատուած գանգուած մը պիտի ներկայացնէր ազգը:

Անոնք ազգութեան գաղափարին առաքելներն են և մեր մտքին լուսաւարիչները:

Յարգանք ուրեմն անոնց յիշատակին:

(Եկոչնակ) Արշակ Ա. Ալլոյանեան (Վ.Երջ)

*) Տեա. Պատմ. Հայ. Տպագ. Վեճնակի 1895 12 215—16: